№ 6 (159) XV ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Բ. Կ. Կոմիտէի որոշմամբ՝ Բագրի նահանգապետ իշխան Նակաշիձէ, փետրուարեան եղեռնի գլխաւոր հեղինակը, մայիսի 11 24-ին ենթարկուեց տէռորի՝ ռռումբի միջոցով։ Նահանգապետը ապաւնեց տեղնուռտեղը։ Տէռորիստը ազատ է։

ՀԱՄԻԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Արևան ալիքը տարածուում է... Բագուից նա անցաւ Երևան, և այժմ՝ Հին-Նախիջևանն է՝ իր շրջակայ գիւղերով, որ դարձել է քաղաքական ընդհարման բեմ, ներկուած հարևանների արիւնով և բռնկուած մոլեռանդութեան կրակով։

Իշխան Գոլիցին, ապաստանած Պետերբուրգ, ուր նա կայսերական սիրելիների շարքն է դասւել և իշխան Նակաշիձէ, ապաստանած գերեզմանատանը, ուր նրան տէռորիստի արդարադատ բազուկը տեղաւորեց, երկուսն էլ կարող են պարծենալ իրենց գործով, իրենց դաւերի հսկայական արդիւնքով։ Արժանաւոր աշակերտներ սուլթան Համիդի, ներշնչուած նոյն ատելութեամբ դէպի ըմբոստ ժողովուրդը, նոյն թոյնով դէպի „անհանգիստ" հայութիւնը,—այդ ոճրագործները արևան դարագլուխ բաց արին այն երկրի ծոցում, ուր աշխատաւորի քրտինքը խոպան հողն էր մշակում և համերաշխութիւնը ծաղկում անարգել...

Հիասթափուած փետրուարեան դէպքերի արդիւնքից Բագուում, աւելի ևս Երևանի մէջ, թիւրք-հայկական ընդհարումներ պատրաստողները իրենց աչքերը դարձրին դէպի Նախջևանի գաւառը, ուր զբաղել է մահմետական տարրը, ուր պարսկական հարևանութեան շնորհիւ, մահմետականութիւնը կարող է „հրաշքներ" գործել և անպատիժ կերպով արիւն ու կրակ տարածել հայ ազգաբնակութեան թոյլ մասերում։

Կոտորածը վաղուց է պատրաստուած եղել։

Դեռ մայիսի 10-ին, Երևանից, բաւական կանխածելի աղբիւրից բղխած մի հեռագիր ահա այսպէս էր նախագուշակում իրերի վիճակը Նախիջևանի կողմերում.

„Բագուի դէպքերից յետոյ, Նախիջևանի թիւրքերը ամէն ջանք գործ են դնում՝ լաւ յարաբերութիւններ պահպանելու հայերի հետ։ Մահմէտականների կողմից ոչ մի առիթ չի տրւել՝ ազգայնական հողի վրայ, մինչդեռ մայիսի 6-ին, հինգ հայեր տարճանակի հարուածներով սպանեցին մի թիւրք, որ երեկոյեան աղօթքն էր անում։ Մայիսի 9-ին, Շխմահմատ գիւղի հայ բնակիչները սպանեցին երկու թիւրք մեծ-ճանապարհի վրայ։ Թմբուլ գիւղում սպանուեց մի մահմէտական։ Երևանի մօտ թիւրքահպատակ հայերը մահացու վէրք տուին մի մահմէտականի, որը քիչ յետոյ մեռաւ։ Գրգռումը Նախիջևանի մէջ ահագին է. ազգեցիկ թիւրքերը հաղիւ են կարողանում զսպել ժողովրդական ցասման բռնկումը։ Տրամադրութիւնը աղմկայոյզ է։ Եթէ հայերը չդադարեցնեն իրենց յարձակումները թիւրքերի վրայ, մասսային կոտորածները ամբողջ նահանգի մէջ շատ հաւանական են։ Եւ կարգը վերահաստատելու համար՝ ռազմիկական և զինուորական եղած ուժերը բաւական չեն լինի"...

Այդ հեռագիրը գալիք կոտորածի մարգարէացումն էր։ Եւ այն մարդիկ, որոնք ներշնչել են այդ տեղեկագիրը, դեռ մայիսի սկզբին քաջ գիտէին, որ մասսային ջարդ տեղի պիտի ունենայ Նախիջևանի կողմերում, ինչպէս և այն, որ „ռազմիկական և զինուորական ուժերը բաւական չեն լինի" կարգը վերահաստատելու համար։

Եղեռնը տեղի ունեցաւ։

„Նախիջևանի կոտորածը—ասում է Թիֆլիսից Պարիզի մամուլին ուղարկուած հեռագիրը—Բագուի ջարդից էլ աւելի սոսկալի է։ Հայերի բոլոր խանութները թալանուած և այրուած են։ Կոտորածը տարածուում է հարևան գիւղերի վրայ։ Քաղաքը պաշարման վիճակի մէջ է։ Ռազմիկանութիւնը աջակցութիւն չէ ցոյց տալիս զոհերին։ Հայերի վիճակը ողբալի է"։

Ահա ուրեմն մի արիւնոտ Ուրֆա, մի Ակն, մի Էրզրում, մի Այգեստան՝ տեղափոխուած Անդրկովկաս, այն վայրերը, ուր սաւառնում է քրիստոնեայ „բարեխնամ" ցարի հոգին, ուր իբր թէ չէ հասնում Համիդի արիւնոտ ձեռքը և նրա գործակալների սև պրոպագանդը...

Եւ որպիսի՜ նշանակալից զուգադիպութիւն...

Նոյն օրերին, երբ կովկասեան գլխաւոր քաղաքներում՝ յափշտակուած ուղերձներով Վ.օրենցով-Դաշկովի մուտքն է ողջունւում, երբ նրա գալստեան մէջ ամբողջ Կովկասը երազում է տեսնել իր հանգիստն ու երջանկութիւնը, նոյն այդ օրերին՝ Նախիջևանի գաւառը դառնում է Համիդեան դէպքերի թատերաբեմ, պատրաստուած Գոլիցինի հոգեզաւակներով, ցարի ոստիկանութեան նենգամիտ աջակցութեամբ։

Պատահականութիւն է այս, թէ՞ ծրագիր։

Մեր կարծիքով՝ ծրագիր։ Ցարի կառավարութիւնը, հակառակ իր ջանքերին, անկարող է թագցնել, որ Կովկասի արդի տագնապի միջոցին, նա ձգտում է, նոյնիսկ ոճրագործութեան գնով, կանգնեցնել մոլեռանդ, հակայեղափոխական թիւրք տարրը՝ հայերի և վրացիների դէմ, իբրև մի վստահելի փականք կամ՝ զօրեղ միջոց։ Եւ տարաբախտաբար, այդ նենգամիտ միջոցը, հակառակ համերաշխութեան այնքա՜ն ջերմ կոչերին, աջողութեան բացարձակ նշաններ ունի...

Դիւրահաւատ և քաղաքականապէս անհասուն թիւրք տարրերի համար միապետական թակարդը՝ անտեսանելի է։ Մի քանի խոստումներ, որոնք տուեցին մահմէտական պատգամաւորութեանը Պետերբուրգում, այլև „բարձրաստիճան“ ժպիտները, որոնց արժանանում են թիւրք ազդեցիկները կովկասեան գլխաւոր քաղաքների մէջ, բաւական են շոյելու թիւրք ազգաբնակութեան ինքնասիրութիւնը և կանգնեցնելու նրան այն ժողովրդի դիմաց, որը նրա բախտակիցն է եղել պատմութեան ընթացքում և նրա ընկերը պիտի լինի՝ գալիք մեծ ու ծանր օրերին...

Ահա ածխացած դիակներ, տներ՝ Թալանի ենթակայ, ահա աւերակ գիւղեր, արիւն, արտասուք, ահա հարևանը հարևանի դէմ, երկրացին՝ երկրացու կրծքին չոքած.—այդ ողբերգական պատկերը, գիտենք, հրճւանք պիտի պատճառէ Եըլդըզի Մենակեացին, որ այդ ծրագրի անդրանիկ ստեղծագործողն է, և նրա „քրիստոնեայ“ գործակիցներին, որոնց անունն է՝ Նիկոլայ և Գոլիցին։ Խաղաղ և անմեղ ժողովրդի այդ դաւադիր ջարդը,—այդ էլ գիտենք—նոր յոյսեր պիտի տայ ցարի ոստիկանութեան՝ նոյնպիսի փորձեր անելու և այլ կէտերում, ուր փոքրաթիւ և անպատրաստ է հայ ազգաբնակութիւնը.—սակայն այդ բոլորը անվերջ չէ և ոչ էլ մշտական աջողութեամբ պսակուելու բախտով օժտուած...

Պատիժը խիստ կը լինի և անողոք։

Պլէվէ, Բօբրիկով, Անդրէեվ, Բրկով, Նակաշիձէ նոյնպէս իրենց երազում էին մեծազօր և ամենակարող, երբ դժոխային դաւեր էին սարքում, երբ մի ժողովուրդ միւսի դէմն էին հանում՝ որպէս զի արեան և արտասուքի մէջ խեղդեն ազատութեան ծիլը և ըմբոստների արդար աղաղակը։

Նրանք արժանի պատիժը կրեցին։

Նոյն պատիժը, հատուցման միակ միջոցը, որ բռնապետութեան սահմաններում տրուած է մարտական-յեղափոխութեանը, կը հասնի և նրանց յաջորդներին — այն անորակելի ոճրագործներին, որոնք ցանում են ատելութիւն, կռիւ, ջարդ, արիւն, դիակներ...

Իսկ դու, հայ մարտիրոս ժողովուրդ, որ վաղուց կրում ես ազատագրութեան ծանր լուծը՝ կոյր և ապերախտ հարևանների ծոցում, հեռու վանիր քեզանից յուսահատ ու սև մտքերը։ Արիւնը թող վախ չ՝ազդէ քեզ։ Հաւատարիմ մնացիր քո կոչման, քո պատմական դերին, անցիր զոհերի վրայից, ու զէնքը ձեռքիդ՝ ծառացիր թշնամուդ առաջ։ Այդ զոհերը՝ քո մեծութեան պատանդներն են։

Նոր զոհերը՝ նոր կռիւ են պահանջում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՍԵՓԱԿԱՆ)

ԹԻՖԼԻՍ, 24 մայիսի

Նախիջեւանի և գաւառում ծանր դէպքեր պատահեցին։ Մահմէտականները, որոնք թւով աւելի շատ են, յարձակում գործեցին հայերի վրայ, համոզւած, որ կառավարութիւնը արգելք չի դնի։ Քաղաքի մէջ հայերի խանութները թալանի մատնուեցին։ Երկու կողմից զոհւածների թիւը բաւական մեծ է։ Յարձակումը տարածւում է գիւղերի վրայ, ուր ժողովուրդը մնացած է անօգնական։

ԹԻՖԼԻՍ, 29 մայիսի
(Թաւրիզի վրայով)

Դրութիւնը Նախիջեւանի գաւառում անսովոր կերպով ծանր է։ Քառասուն գիւղեր թալանւած և հրդեհւած են։ Բնակիչները խմբւած են մի մեծ գիւղի մէջ. նրանք շրջապատւած և պաշարւած են։ Օգնութիւն չկայ։ Ոստիկանութիւնը անտարբեր է։ Հայոց վանքերից մէկը թալանի ենթարկւեց։ Քաղաքի մէջ վերսկսեցին թալան և ընդհարումներ։ Քրդերը արշաւում են դէպի քաղաք, ուր ուտելիքի պակասութիւնը սոսկալի է։ Ճանապարհները բռնւած են մահմէտականներով։ Կառավարութիւնը անգործ՝ ականատես է։

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕՅԻ

Ն Ա Մ Ա Կ Ը

Մենք ստացանք Սօցիալիստական Միջազգային Բիւրօյից հետեւեալ նամակը, գրւած Բրիւսսէլից, մայիսի 12-ին.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի ընկերներ,

Ներկայ տարւայ մայիսի 10-ի «Տրիբուն Ռուս»-ի մէջ կարդացի, որ ձեր կազմակերպութիւնը յարել է Սօցիալիստական Միջազգային Կօնգրէսների մշակած որոշումներին։

Ես ձեզ երախտապարտ կը լինեմ, եթէ բարեհաճիք այդ հարցի վերաբերմամբ մի պաշտօնական ծանուցում ուղղել Սօցիալիստական Միջազգային Կօմիտէին, ուղարկելով միաժամանակ ձեր կանոնագրքի մի օրինակը։

Ընդունեցէք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները։

Քաբուուշար (ստորագրութիւն)

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕՅԻՆ

Սիրելի քաղաքացիներ,

Ի պատասխան մայիսի 12 թւակիր Ձեր նամակին, պատիւ ունենք տեղեկացնել Ձեզ, որ, արդարև, մենք յարած

ենք միջազգային սոցիալիզմի սկզբունքներին, որոնք արծարծուել են 15 տարուց ի վեր մեր հրատարակութիւնների մէջ, մասնաւորապէս մեր կուսակցութեան օրգան «Դրօշակ»ի էջերում։

Սակայն այդ կողմնակցութիւնը և այդ պրօպագանդը մինչև օրս զուտ թէօրիական բնոյթ ունէին, քանի որ մեր գործունէութիւնը կենտրօնացած էր թիւրքաց Հայաստանում, ուր բնաւ հող չկայ՝ սոցիալիստական գործօն պրօպագանդի համար։

Բայց ահա երկու տարի է, ինչ Հ. Յ. Դաշնակցութիւնը սկսել է իր կոիւը նաև ռուսական Հայաստանում. և քանի որ մեր երկրի այդ հատուածի մէջ պայմանները աւելի նպաստաւոր են՝ սոցիալիստական շարժում կազմակերպելու համար, — ուստի մեր կուսակցութեան Խորհուրդը, վերջին մարտ ամսի իր ժողովում, հարկ սեպեց մշակել սոցիալական ծրագրի մի նախագիծ, Կովկասի համար, որի մէջ նա ընդունում է միջազգային սոցիալիստական կօնգրէսների հիմնական որոշումները։

Այդ որոշումների հիման վրայ մենք վերջերս համաձայնութեան եկանք ռուսական կայսրութեան յեղափոխական-սոցիալիստական կուսակցութիւնների հետ՝ կազմակերպելու համար միահամուռ գործակցութիւն՝ ցարիզմի և կապիտալիզմի դէմ։

Վերոյիշեալ նախագիծը պաշտօնապէս կը հաղորդուի Զեզ՝ Կուսակցութեան առաջիկայ Ընդհանուր Ժողովի կողմից վաւերացնելուց յետոյ։

Ընդունեցէք, սիրելի քաղաքացիներ, մեր եղբայրական ողջոյնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

17 Մայիս, 1904
Ժընէվ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒԻ

ԿՈՒԻՆԵՐ
ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ
ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակ. № 5-ի)

16. ԳՈՄՍԻ ԿՈՒԻԸ

Մուրատ՝ Դաշտ իջնելէ յետոյ՝ երկար չմնաց այնտեղ. քանի մը ընկերներով Համ գնաց փամփուշտ փոխադրելու, որովհետև փամփուշտի պաշարը սպառուած էր գրեթէ։ Ճամբան տեղ մը ընդհարում կը պատահի զօրքերու և իրենց միջև, բայց այդ արգելք չեղաւ, որ անոնք յաջողութեամբ Դաշտ գնային և վերադառնային նորէն Դաշտ։

Գոմս գիւղը կը գտնուէր թիւրք աղա մը, Հաճի-Ալի անունով, որ գիւղացիները կողոպտելով կարողացեր էր մեծ հարստութիւն դիզել և գիւղացիներու վրայ սանձարձակ գործ կը դնէր ամէն տեսակ բռնութիւն։ Օր մը գիւղէն կին մը արտ գացեր էր հասկաքաղ ընելու և վերադարձեր էր գիւղ. աղան երբ կը նկատէ այդ՝ կնոջ վրայ կը յարձակի, կը ծեծէ և կը հայհոյէ, թէ ինչո՞ւ առանց հրամանի իր արտէն հասկաքաղ ըրած էր. ապա կը վերցնէ հասկերն և ցորենը կը ցրէ ու կը փճացնէ։ Ամբողջ օրը արևի առաջ տաքութենէն տապակուիլ, ինչո՞ւ համար, հաւաքելու այն՝ որ երկնքի թռչուններուն իսկ չէ արգելուած և որ իզուր պիտի փճանար արտին մէջ, բայց արիւն քրտինքով ձեռք բերած քանի մը հատիկներու համար ծեծուիլ և անինայ անպատուիլ։ Անգութ բախտ, որ ոչ մի ժամանակ չգիտես խնայել թշուառին...

Խեղճ կինը դէպի երկինքը կը տարածէ ձեռքերը և վշտագին կը կանչէ երկնքի երեսին. „Ո՜վ Աստուած, եթէ դու մեր պապերի Աստուածն ես, մինչև իրիկուն այս անօրէնին դատը կը տեսնես“։

Եւ պապերի Աստուածը ուղարկեց դատաւորներ անօրէնին համար. դատեց անիկա ամենարդար դատով։

Մի քանի օրէ իվեր գիւղի մէջ պահուած էին մեր զինուորներէն մի քանիները։ Այդ օրը, երբ տեղի ունեցաւ տխուր միջադէպը, իրիկուան կողմ զինուորներէն Պօղոս դուրս կուգայ գիւղի մէջ ման գալու. աղան նկատելով անոր օտարոտի դէմքը կը մօտենայ և կըսկսի հարցուփորձել զայն։ Բայց դրանով ալ չբաւականալով կ'ուզէ իր աղայութիւնը ցոյց տալ՝ անպատուելով ու հայհոյելով. Պօղոս կը պատասխանէ միևնոյն ձևով, կը յարձակի վրան և կ'արձակէ իր ատրճանակը. քաջ թիւրքը կերպով մը կ'ազատի Պօղոսի ձեռքէն և կը փախչի։ Աղան կը զինի անմիջապէս, հետը կը վերցնէ նաև երկու ընկեր և կուգայ ուղիղ այն տան դիմաց դիրք բռնելու, ուր մերոնք կը գտնուէին։ Մերոնցմէ մէկ մասը կը բաժնուի և երբ աղան ընկերներով տղայոց դիրքի վրայ գնդակներ արձակելով զբաղած էր, կերթան հակառակ կողմէն և կ'ուղղեն հրացանները ուղիղ անոնց մէջքին, երեք հրացաններ կը պարպուին և երեք թշնամիներն ալ իրարու վրայ կը գլորուին։ Այդ օր գիւղին մէջ թշնամիներէն կըսպաննուին ընդամէնը 5 հոգի։ Տղայք $1^1/_2$ ժամուան կռիւէն յետոյ՝ կը վերցնեն սպանուածներու զէնքերը, կ'այրեն անոնց տները և կը հեռանան։ Շրջակայ գիւղերէն քրդեր ու թիւրքեր կ'աճապարեն օգնութեան, բայց ֆէդայու մօսինները ժամանակ չեն տար անոնց աւելի առաջանալու (յուլիս 8)։

Հաջի-Ալի աղայի սպանութեան լուրը շուտով տարածուեցաւ ամբողջ Դաշտի մէջ. շատ գիւղերէ, նման աղաներ սարսափահար Մուշ թափուեցան, թողնելով իրենց քէօշքերը, կառավարութենէ պաշտպանութիւն խնդրելու համար։

17. ԿՈՒՐԱՎԱՅԻ ԿՈՒԻՆԵՐԸ

Դատարկ է Սասուն, լերան գաղանները կ'այցելեն այն բնակութիւնները, ուր մի ժամանակ սասունցի խաղաղ ընտանիքն կը ծուարէր. տուներու փոխարէն աւերակներու կոյտեր միայն կ'երևին։ Ծիր և առոյգ սասունցու փոխարէն քաղցած ու մերկանդամ կմախքներ կը շրջին Մշոյ փողոցները։ Իրաւունքի ձայնը չարաչար խեղդուած, բռնութիւնը անզգամօրէն քթի տակէն կը ծիծաղէր, միայն մի հոգս է մնացած, որ կը ծանրանայ անոր սրտի վրայ, այդ հոգսէն ալ կ'ազատուի, եթէ Անդրանիկի գլուխը ձեռք բերէ։ Հրէ՜շ, որ մի կողմէն գիտէ արեան մէջ խեղդել մարդկային իրաւունքի և ազատութեան ձայնը և միւս կողմէ ստրկութեան, ամենազազրելի գերութեան շղթաներով կաշկանդել իր ճակտի քրտինքով ապրող խաղաղ ժողովրդի մը աշխատող ձեռները։ Ե՞րբ կ'ընկնին շղթաները այդ ձեռներէ, ե՞րբ կը ծլի ազատութեան բողբոջը արիւնով ողողուած հողի մէջ։

Այսպիսի մտքեր կ'անցնէին գլխով, այսպիսի հարցեր կը ծագէին այնտեղ, երբ հայ ֆէդային հրացանի փողին կոթնած՝ երէկուան անցքերը կը յիշէր։ Վրէ՞ժ կը պահանջէին մեզմէ. լուծեցի՞նք այդ վրէժը, արդարացուցի՞նք այնքան յոյսերը։ Բայց թշնամին անողորմ է, նա միշտ պարտական կը թողնու քեզ. կ'ուզե՞ս հին վրէժը լուծուած համարել։ Ցիշի՛ր երէկը, դեռ տաք են Հրայրի և ընկերների դիակները, դեռ արեան մէջ կը լողան Վահանի և բազում սասունցիներու մարմինները. և ատոնք բոլոր վրէ՞ժ կ'աղաղակեն. վրէ՞ժ, այո՛. անմահ հոգիներ, մենք ողջ մնացողներս ձեզ կը միանանք շուտով. . . Կըսթափի՛ հայ ֆէդան, ձեռք կ'առնէ հրացանը, տենդոտ նայուածքով կը քննէ պատրօնտաշը, քանի մը փամփուշտ միայն մնացեր էր այնտեղ. . . Ի՞նչ արած կը մրմնջէ ինքնիրեն, աւելին չունիմ. . .

Անդրանիկ և Գէորգ Զաւուշ Նորէն Սասուն էին գնացեր։ Ցուլիս 10-ին անոնք կը վերադառնան անկէ և Բերդակ գիւղին մէջ ընկերներ կը գտնեն։ Այնտեղ Անդրանիկ կ'որոշէ նախ քան զէնք վար դնելը, գործածել վերջին փամփուշտը՝ կառավարութեան մի անգամ ալ մի լաւ հարուած տալու համար։ Ցուլիսի 16-ին Անդրանիկ մօտ 34 հոգիէ բաղկացած խմբով Կուրապա գնաց։ Խմբի համար նշանակուեցան նոր տասնապետներ և անոնց օգնականներ։ Դեռ մէկ օր էր որ խումբը գիւղը մտեր էր, հետևեալ օրը ժամը 5-ին լուր կուտան, որ 80-ի չափ զօրք գիւղը կուգայ։ Գիւղապետը կը դիմաւորէ անոնց, գերեզմանոցը կը տանէ, ուր բոլորն ալ կըստանան ուտելիք։ Բայց այդքանով անոնք չեն բաւականանար, գիւղը կը մտնեն և կըսկսին տներէ բռնի պահանջներ ընել. զօրքերէն մէկը կ'ուզէ լրբաբար վարուիլ մի հայ կնոջ պատուի հետ. կինը ահաբեկած մի ճիչ կ'արձակէ ու կը փախչի։ Անդրանիկ լաւ կը դիտէ անցածդարձածը։ Խումբը չորս մասի էր բաժնուած. զօրքերէն մին կը մօտենայ այն դրան, ուր Առաքելի տասնեակն կը գտնուէր. կը ծեծէ դուռը, տղերք կ'ուզեն դուրս նետուիլ, բայց Առաքել տակաւին կըսպասեցնէ. դրան արանքներէն զինուորը լաւ կերպով կը նկատէ ներս եղողները և „կէլին, պուրտա ֆէդայի վար" կանչելով ձայն կուտայ միւս ընկերներուն։ Շուտով կը հաւաքուին թիւրք զինուորները և կը պաշարեն տունը։ Անդրանիկ միւս երեք խմբերը պատրաստ կը պահէ, բայց մի քիչ ևս կըսպասէ, որ զօրքերը աւելի հաւաքուին, որպէս զի իրենց գնդակներն ալ առատ հունձ ընեն։ Ցանկարծ երեք կողմերէ կը պայթին հրացանները, թիւրքերը կ'ընկնին դիակ դիակի վրայ. խուճապը կըսկսի. մի մասը հազիւ կը կարողանայ գիւղի աթարներու կոյտերու ետև և գերեզմանոցին մէջ դիրք բռնել։ Մերոնք վրէ՞ժ Սեդրակի, Սարոյի, Քեռիի, վրէ՞ժ, կանչելով կը թռչին անոնց ետևէն։ Գէորգ Զաւուշ և Մուրատ կ'արշաւեն դէպի գերեզմանատունը, անոնց ետևէն կը վազեն գիւղը գանուող թիւրքերու մէկ մասը, երկու կողմէն ալ կըսկսի կատաղի կռիւ մը, գրեթէ կուրծք առ կուրծք։ Կը հասնին շուտով Սմբատ, Իսօն, Պողոս, Աստուր, զօրքերու դիակներով կը ծածկուի գերեզմանատունը, ողջ մնացողները մի կերպ իրենց գլուխը կ'ազատեն։ Իսկ զօրապետը, որ մի բոպէ առաջ խրոխտ հրամաններ կ'արձակէր, այժմ սպիտակ երեսսրբիչը վիզը փաթթած այնպէս կը փախչէր, որ որսկան շունը չպիտի կրնար անշուշտ ետևէն հասնիլ։

Երբ գիւղը բոլորովին պարպուած էր թիւրքերէն՝ Անդրանիկ դիրքերով կ'ամրացնէ գիւղը։ Եկեղեցու շէնքը գիւղի տներէն ամենաբարձրը լինելով, անոր կտուրը դիրքեր շինել կուտայ։ Եկեղեցու զանգակները կըսկսին հնչել՝ շրջակայ գիւղերուն իմաց տալու կուի մասին։ Իսօն, Սմբատ և Պողոս բռներ էին գիւղի հարաւային կողմը, Մկրօն և Հասրաթ՝ արևելեան կողմ, Առաքել, Աւետիս, Մէշէտին՝ հիւսիսային կողմ, իսկ արևմտեան կողմ եկեղեցու կտուրի դիրքերը՝ Յովհաննէս, Արամ, Աստուր և ուրիշ չորս ընկերներ։ Աննկարագրելի է մերոնց ոգևորութիւնը, մէկը կ'երգէր, միւսները պար կը բռնէին և այսպէս ոգևորիչ ուրախութիւն կը տիրէր դիրքերու վրայ։ Քիչ մը յետոյ կուգայ Ալայ պէյ 60-70 ձիաւորներու գլուխ անցած։ Մեր դիրքերէն մեկնող մի չարաճճի գնդակ վար կը գլորէ առաջին ձիաւորը, ձին կը փախչի և գիւղը կուգայ։ Այսպէս կը կատարեն յեղափոխականները պատուի և ընդունելութեան պարտքը։ Շուտով հաւարի կը հասնին Ավրայէն, Սուլուխէն, Մատնավանքէն և ուրիշ գիւղերէ շատ մը թիւրքեր ու չէրքէզներ։ Կռիւը կը շարունակուէր, զանգակները կը հնչէին, դրօշակը կը ծածանուէր։

Անդրանիկ կ'ուղարկէ Մուրատը, բոլոր դիրքերուն իմաց տալու, որ մութը կոխելուն ժամը կէսին, բոլորը կազմ և պատրաստ սպասեն սուլիչի ձայնին հաւաքուելու Մուրատ գետի ափը։ Որոշած ժամուն խումբը կը գանուի այնտեղ և գիշերուան լռութեան մէջ կ'անցնի ջրէն ու կը հեռանայ։ Գիւղի փողոցներէն անցնելու ատեն տղայք տան մը սեմին վրայ ընկած երեխայ մը կը նկատեն, զայն հետերնին կը վերցնեն ու ճանապարհի վրայ գտնուող գիւղ մը կը յանձնեն խնամելու համար։ Տղայոց հեռանալէն յետոյ, թշնամիները բաւական կը շարունակեն հրացանաձգութիւնը. Մշոյ կողմէն ալ ճամբայ ընկած կը լինի մի նոր գունդ երեք թնդանօթներով դէպի Կուրապա։

Հետևեալ օրը Կուրապա, Ծխավա, Ախչան գիւղերը անպաշտպան մնալով կրեցին ծանր ծանր վնասներ։ Թիւրքերը կողոպտեցին ամբողջ կայքը և սպանեցին 70 անձ։ Կուի ժամանակ թիւրքերէն սպանուեցաւ 40 հոգի և մէկը միայն մերոնցմէ։ Զօրքերը հրդեհեցին Կուրապու և Ախչան (16 ապրիլ)։

Կուրապայի հրդեհման ժամանակ, երբ բնակիչները սարսափահար կը փախչէին դէպի Ախչան, այնտեղի միւտիրը, դուրս կը վազեցնէ զանոնք ու չ'ընդունիր գիւղին մէջ. ատոր վրայ ժողովուրդը և հայ զինուորներէն չորս հոգի կը յարձակին միւտիրի և ժանտարմերի վրայ և լաւ կը ծեծեն զանոնք։

(Շարունակելի)

ՄԵՆԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դո՛ւն էլ վեր կացար դէմ արևածագին,
Գոտիդ կապեցիր քո մէջքը հպարտ,
Աչքդ դարձուցիր շողումն աստղերին,
Ասիր, կը հասնե՞մ՝ դեռ լոյս չբացած։

Եւ կեանքի բեռը դրիր քո մէջքին,
Ցամբորդի ցուպը քո ձեռքը առար.
Ցոյսն էր շողշողում քո սաթ աչքերին,
Եւ հպարտ-հպարտուէն ճամբան ընկար։

Ու սիրտդ յուսոտ,
Հոգիդ մրրկոտ,
Միշտ քայլում էիր՝
Քո ճամբան փշոտ։

Քա՛լէ ու քա՛լէ,
Էն ուղին մօտ է.
Ալ-վառ շողերով
Արև կը ծագէ։

Է՜յ, ազիզ ախպէր, շատ ջահէլ ջիւան
Կերա՛ւ ու կերաւ այս անծէր ճամբան.
Շատերը ընկան էս ճամբի կիսին,
Սրտերը վառած՝ յոյսը աչերին։

Հէ՜յ վախ, հէ՜յ վախ, հէ՜յ նամարդի հոգան
Քեզ էլ կուլ տուեց էս անկուշտ ճամբան.
Հէ՜յ վախ, հէ՜յ աշխարհ, քեզ էլ կուլ տուեց
Էս ազիզ ճամբան՝ անծէր, անվախճան։

Թէ սաղ մնացինք՝ ու հազար բարով
Կրցանք յաղթանակ բերել մեր երկրին,
Թէ որ մեր երկրէն հազար արիւնով
Կրցանք դուրս քշել վատթար դուշմանին,

Կը գամ կը կանչեմ Բասենայ դաշտին,
«Հէ՜յ ազիզ, ախպէր, ե՛լ, մե՛նք յաղթեցինք.
Մենք դուրս քշեցինք անզութ դուշմանին,
Հազար հազարով վրէժ հանեցինք։»

Անծրևից մաշած քո ոսկորները
Կը գամ կը ժողեմ՝ մէկ-մէկ, երգելով
Տանեմ կը թաղեմ Անտոբայ սարը՝
Սասուն ապահով-հանգչիս անխռով։

ԻՇԽԱՆ

ՄԵՐ ԱՐՇԱԼՈՅՍԸ

Արեան ծովէն, Մոխրի դաշտէն վայրօրէն
Հնադարեան ուխտաւորի մը հանգոյն՝
Խոր հաւատքով Արևմուտքի կողմերէն
Կը պատսպարէինք Արշալոյսի մեր ծագումն

Արևմուտքը Ծիածաններ մերթ կապեց,
Որ վերակապ չ'եղան սակայն մեր վերքին,
Եւ մերթ մութլ ամպրոպներով ծածկուեց
Ու շանթերով ակօսեց մեր որբ հոգին։

Կոչնակներու Պաղատանքին հանդերձ
Մեր լոյն, աղօթք կրկնուեցան դարէդար.
Կամ թէ չկար Աստուած. կամ կար չգթայ,
Ու մենք Մահին սպասեցինք հոգե՛նար։

Սակայն ահա Արդարութեան Ցովազներ
Իրաւունքի ճամբաները կ'արօրեն...
Մեզ Արշալոյս, Մաքառումի եղբայրներ,
Արև ելքէն պիտի ծագէ շո՛ւտ օրեն։

ՎՏԱՐԱՆԴԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՍՈՎԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Նամակ Վասպուրականից)

17 մարտի, 1905

Հրատապ խնդիրը երկրում՝ սովն է։

Ներկայիս կառավարութիւնը Սասունի դէպքերից անմիջապէս յետոյ, ամենայն խստութեամբ սկսեց հաւաքել հարկերը, նախկին տարիներից 2-3 անգամ մեծացրած քանակով։ Հայ գիւղացին հէնց տարւայ սկզբից ստիպուած եղաւ վերջ տալու ունեցած հացահատիկին, լրացնելով կառավարչական անչափ ու անկանոն հարկերը։ Այդ ծանր ու հսկայական հարկերը ներկայ սովի հիմնաքարն եղան։

Մի կողմ թողած Սասունի և Մուշի դաշտի մուրացիկ ու սովալլուկ ժողովուրդը, որ ինքնաբերաբար ամեն ինչ զոհեց ազատագրութեան գործին, ահա գալիս աւելանում է մի թշնամի ևս, սովը, որ նոյնքան կատաղի է, որքան քիւրդն ու թիւրքը, նոյնքան սպառնալից, որքան Մուշի մէջ կենտրօնացած զօրքի սուինը։

Դեռ ամառւայ մէջ սկսեց անտանելի կացութիւնը Դաշտում։ Խուզարկութեան և հարկահաւաքութեան դիմակի տակ սկսեցին թալանել ու քայքայել։ Այժմ կառավարութիւնը ունի մի աւետարան—տնտեսական քայքայումով ոչնչացնել ժողովուրդը առանց ձայնի, առանց ոևէ աղմուկի։ Եւ միանգամայն խեղդել ուզենալով յեղափոխական ոգին՝ նա այժմ նախամեծար է համարում սովամահ վիճակին հասցնել հայ ժողովուրդը՝ հարկերը ծանրացնելով, բակիաներ հաւաքելով, որի գանձման ընթացքում, ըստ թիւրքական արդարադատութեան, գանձւում է նոյնքան դրամ միւլազիմին կամ զաբթիային իբր կաշառք։

Սովը իր ճիրանները տարածել է Սասունի լեռներից մինչև պարսկական սահմանը։ Իբրև դաշտեցու հարեւան՝ նոյն քաղցն ու տառապանքը վայելում է Խլաթը, որի տանջանքներն ու տառապանքները արդէն ճակատագրական են։ Ու բոլորիդ էլ քաջածանօթ Ալ. բէկը դատարկեց երկիրը հարկահաւաքութեան ու խուզարկութեան պատրւակով՝ կաշառք շորթելով։ Ահա մի ամբողջ ամիս է, ինչ Խլաթի ժողովրդի մեծամասնութիւնը իր դժբախտ գոյութիւնը քարշ է տալիս մուրալով։ Բաղէշի շրջակայ Երանայ և Մոկունք գաւառակները աւելի վատթար կացութիւն ունին։ Մանաւանդ ծայրայեղ թշւառ են խարտոս կոչուած վայրի հայ բնակիչները, որոնք հարստահարւում են քրդերից, որքան և կառավարութիւնից։ Կարճկանում ևս քաղցածների ահագին լեգիօններ կան։ Ուրանց գիւղում՝ 45 ընտանիք սոված է. գիւղը բաղկացած է 80 տնից։ Կեծան գաւառամասում սովեալների թիւն է 70 ընտանիք, Փրխուսում՝ 14 տուն (25 տնից), Վանիկ՝ 80 ընտանիքից 30, Օզվանց՝ 20 ընտանիք, Կոմ՝ 4 ընտանիք։ Գոյութիւն չունի մի գիւղ, որի կէսը քաղցի մէջ չգտնւի։ Այս գաւառը, չնայած հողի առատութեան և բերրիութեան, ծայրահեղ հարկերի պատճառով նետուած է սովի գիրկը։ Փոքր ի շատէ միջինարական է դաշտերի վիճակը. լեռնային գիւղերը ողբալի են։ Սպարկերտ գաւառում սովն է միահեծան տէրը։ Երկու հարիւր տան մէջ հազիւ 50 տուն միայն կարող է համնել գարնան։ Ծանր հարկերը և „ֆէդայի“ գտնելու պատրւակի տակ կատարուած խուզարկութիւնները ամէն բանից զրկեցին նրանց։

Մոկսում ևս քաղցածների ահագին խմբեր վխտում են և ընկած են զանազան գաւառակներ մուրացկանութիւն անելու։ Կաւաշն ևս այս տարի ունի ահագին թւով սովեալներ։ Դժբախտ կացութեան մէջ են մանաւանդ Գանձակ, Վասից, Ցարբերդ, Մոխրաբերդ և Ցիրիճ գիւղերը, որոնք թալանուեցին Նարեկի դէպքի խուզարկութիւնների ժամանակ։ Իսկ Կառկառը — դրա մասին արդէն աւելորդ է խօսել։ Ո՛չ մի տեղ թշւառութիւնը այնքան խիստ գոյն չի ունեցել, որքան այս գաւառում. այստեղ միայն 15—20 տուն ունին ուտելու հաց։ Ստորին Կառկառը արդէն բոլորովին զուրկ է հացից։

Այս օրերս Բաղէշի բանտում մեռան այս գաւառի Թացու գիւղից երկու հոգի, մէկը գիւղի քահանան, միւսը Կզրօ անունով անձը։ Բաղէշի բանտում քաղցից մեռել է նոյնպէս խիզանցի մի երիտասարդ։ Սա Թուոնոտ ծաղր է ուղղած „Կարմիր-Խաչի" անդամուհիներին, որոնցից ոչ մէկը չկարողացաւ մուտք գտնել արեան երկիրը, օգնելու սովամահ եղողներին՝ հացով, փողով. . .

Սրանից մի ամիս առաջ Կառկառի մեծամեծները երկու ինդրագիր ներկայացրին՝ մէկը կուսակալին, միւսը անգլիական հիւպատոսին, նկարագրելով իրենց թշուառ կացութիւնը։ Հետևանքը այն եղաւ, որ տաս ձիաւոր բարձրացան Կառկառի սարը նոր հարկահաւաքութեան։ Հայոց Զորում, Արճակում ու քաղաքիս մէջ դարձեալ մեծ թւով սովեալներ կան և օրէցօր այդ թիւը բարձրանում է։ Առանց դրսի լուրջ օգնութեան՝ ժողովուրդը սովամահ կը լինի։ Գաղթել էլ չի կարող. դէպի ո՞ւր, մի սպանդանոցից մի՞ւսը. . .

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Կ. Պոլիս, 11/24 մարտ, 1905

Ստոյգ աղբիւրներէ տեղեկացած՝ կը հաղորդեմ հայ քաղաքական բանտարկեալներու մասին քանի մը մանրամասներ։

Աքիա գտնուողները և ծերբակալման թւականները.

1) Յովակիմ Օհաննէս Աչըգ-Կէօզեան.— Իւնիացի, ձերբակալուած Վան, 1898 սեպտեմբեր 1-ին, պաշտօնական տօմարին մէջ ձերբակալութիւնը ցուցուած է 1899 ապրիլ 5-ին. Պոլիս տարուելէն վերջ՝ առաջին անգամ հարցաքննիչին ներկայացած օրուան թւականն է այս։ Ցկեանս բերդարգել։

2) Վահան Աբրահամ Աբրահամեան.— Կեսարացի, ձերբակալուած Պոլիս, 1897 յունիս 31-ին. պաշտօնական տօմարին մէջ 1897 հոկտեմբեր 20. ցկեանս բերդարգել։

3) Գասպար Օհաննէս Օհաննէսեան.— Բալուցի, ձերբակալուած Պոլիս, 1897 դեկտեմբեր 25-ին. պաշտօնական տօմարին մէջ՝ 1898 մայիս 19. ցկեանս բերդարգել։

4) Օհաննէս Կարապետ Շամլեան.— Ատաբազարցի, ձերբակալուած նոյն տեղը, 1901 յուլիս 1-ին, իրեն տրուած միւսթանթիգի թէվգըֆ միւղաքէրէին մէջ (ձերբակալման թուղթ) ձերբակալութիւնը ցուցուած է 1901 սեպտեմբեր 16 կամ 17. տասը տարի բերդարգել։

5) Յակոբ Ստեփան Լանփաջեան.— Ատաբազարցի, ձերբակալուած նոյն տեղը, 1901 յունիս 28-ին, թէվգըֆի թուղթին մէջ՝ 1901 սեպտ. 17 կամ 18. տասը տարի բերդարգել։

6) Միհրդատ Կարապետ Ճիլաճեան.— Իւսկիւտարցի, ձերբակալուած Պոլիս, 1897 օգոստոս 9-ին. մահուան։

7) Պօղոս Ալէքսան Սարըեան.— Արմըտանցի, ձերբ. Պոլիս, 1897 օգոս. 6-ին. մահուան։

8) Գրիգոր Վահունի.— (պաշտօնական արձանագրութեան մէջ Գրիգոր Վահան), Շապին-Գարահիսարցի, ուսուցիչ նոյն տեղը, ձերբակալուած նոյն տեղը 1902 յուլիս 1 կամ 2-ին, դատապարտուած Ամասիայի մէջ. Ամասիայի հարցաքննիչին տուած թէվգըֆի միւղաքէրէին մէջ ձերբակալութիւնը ցուցուած է 1902 յուլիս 25. ցկեանս տարագիր (նէֆի էպէտ)։ Երեք շաբաթէ ի վեր Աքիա ղրկուած է։

Շամ-Թարապլուսի մէջ գտնուող հայ քաղաքական դատապարտեալները.

1) Գէորգ Փառչաճեան.—Սամաթիացի, ձերբ. Պոլիս, 1897 սեպտ. 5-ին. ցկեանս բերդարգել։

2) Մուրատ Տէր-Մինասեան. — Պիթլիսի Տատկու Վանիկ գիւղէն, ձերբակալուած Էսկիշէհիր 1897 ապրիլ 24, ցկեանս բերդարգել։

3) Խաչիկ Էլլուխեան.—Ռոտոսթոցի, ձերբ. Պոլիս, 1897 յուլիս 12-ին. ցկեանս բերդարգել։

4) Պետրոս Յուսէփեան. — Սամաթիացի, ձերբակալուած Պոլիս 1897 օգոստոսին. ցկեանս բերդարգել (ոչ յեղափոխական. բայց դատապարտուած որպէս յեղափոխական)։

5) Յարութիւն Պէյզատեան. — Իւսկիւտարցի, ձերբակալուած Պոլիս, 1898 ապրիլ 14-ին, ցկեանս բերդարգել (դատապարտ. որպէս յեղ.)։

6) Վռամշապուհ Սերոբեան.—Արսլանպէկցի, ձերբակալուած նոյն տեղը, 1801 յունիս 29-ին, թէվգըֆի թուղթին մէջ՝ 1901 սեպտեմբեր 16 կամ 18. տասը տարի բերդարգել։

Բոլորն ալ—բացի Գրիգոր Վահունիէ—դատապարտուած Պոլսոյ եղեռնադատ դատարանէն։

Փայասի (Ատանայի վիճակ) բանտը հայ քաղաքական յանցաւորներ կա՞ն թէ ոչ—մեզի յայտնի չէ։

Սինապի մէջ կան 6 հայ քաղաքական յանցաւորներ.

1) Արշակ Տարտաղանեան. — Պալաթցի (Պոլիս), ձերբակալուած Պոլիս, 1897 օգոստոս 12-ին (պաշտօնական տօմարին մէջ՝ 1898 նոյեմբեր 1։ ցկեանս բերդարգել։

2) Յարութիւն Արսլանեան. — Սամաթիացի, ձերբ. Պոլիս, 1899-ի սկիզբները (դատապարտուած որպէս յեղ.). ցկեանս բերդարգել։

3) Թադէոս Սեբաստացի.—Դատապարտուած իբր Մագուստ Սիմոնի սպանիչներէն մէկը, ձերբակալուած Պոլիս, 11 տարի առաջ. մահուան։

4) Խորէն։

5) Յովհաննէս և 6) Ստեփան.—Ռոտոսթոցիներ, ասոնց ձերբակալութիւնը ժամանակակից է Խաչիկ Էլլուխեանի ձերբակալման. երեքն ալ ցկեանս բերդարգել։

Բոլորն ալ դատապարտուած Պոլսոյ եղեռնադատ դատարանէն։

ԿՈՎԿԱՍ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 29 ապրիլի

Կովկասեան նոր փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով, մարտի 30-ին, իր օգնական գեներալ Մալամային ուղարկած մի հեռագրի մէջ իմիջի այլոց ասում է.

„Դիմում եմ ամբողջ ազգաբնակութեան, առանց կրօնի և ազգութեան խորութեան, գործակցելու ինձ՝ մայրենի երկրի

աջող կարգաւորման համար։ Երկրում խաղաղ ճանապարհով կարգ մտցնելու համար անհրաժեշտ է բոլոր հասարակական ուժերի օգնութիւնը։ Ես հաւատում եմ ժողովրդական իմաստութեանը և համոզուած եմ, որ ազգաբնակութեան անհանդիստ մասը չի դիմանայ հասարակական ահագին բարեփոխման մեծամասնութեան միահամուռ ճնշմանը։ Նորին կայսերական մեծութեան ուած ցուցումների համաձայն՝ ես կը հրաւիրեմ ազգաբնակութեան ներկայացուցիչների ժողով։ Դրա մէջ մանակցելու են ազնուականութեան, քաղաքների և գիւղական համայնքների, նոյնպէս և ուղղափառ, հայ-լուսաւորչական և մահմէտական հոգևորականութեան ներկայացուցիչները։ Այդ ժողովներին կառաջարկեի կարծիք յայտնել այն միջոցների մասին, որոնք անյապաղ անհրաժեշտ են ամենատեսակ աւազակութիւն, կողոպուտ և անկարգութիւն վերջացնելու համար, պարզել թէ որքան կարիք է զգացւում փոփոխել երկրում այժմ գործող դատաստանական կարգը, քննել զեմստվային հիմնարկութիւնների օրէնքների գործադրութեան հնարաւորութիւնը և նպատակայարմարութիւնը։ Բացի դրանից ես ձեռք կառնեմ ինձանից կախուած բոլոր միջոցները՝ փութացնելու հողաբաժանումը, նոյնպէս և պարզելու պետական այն հողերի իսկական չափը, որոնք պէտքական են ազգաբնակութեան ամենակարիքաւոր մասի բնակութեան համար"։

Ի՞նչ է այդ։ Արդեօք քաղաքական բարեփոխումների մի ծրագի՞ր, խոնարհումն յեղափոխական պահանջների առջև, թէ՞ լոկ աղերսանք, այն էլ կեղծաւոր ու նենգամիտ, որ նպատակ ունի խաղաղացնել յեղափոխական ցնցումներով բարձրացած տրամադրութիւնը, հանգցնել այն մարտական կրակը, որ բռնկել է համբերատար ժողովրդին, սկսած Կազբէկի ստորոտներից մինչև Արարատեան դաշտը, Կուրի և Բիօնի ափերից մինչև Արաքսի հովիտը։

Լոկ աղերսանք, և այն էլ կեղծաւոր ու նենգամիտ,— կրկնում եմ ես—կոթնած ակնյայտնի և լուրջ փաստերի վրայ, յենուած այն ուղղութեան վրայ, որ Ալէքսանդր III-ի սև թագաւորութեան օրերից սկսած մարմնացրել է Վլորնցով-Դաշկով, պալատական նախկին մինիստրը, հիմնուած այն տրամադրութեան վրայ, որ մինչև այսօր էլ, հակառակ յեղափոխական փոթորկալից ցնցումների, դեռ տիրում է Զմերային պալատի „օլիգարխիայի" շրջանում, որի շահերի հաւատարիմ պաշտպանն է և պիտի մնայ միշտ՝ նրա հարազատ զաւակը — կովկասեան նոր փոխարքան։

Երկու տեսակի պետական գործիչներ կան, միապետութեան քուրայում մկրտուած։ Մի տեսակը նրանք, որոնք գիտեն յարմարուել շրջապատին և ենթարկուել քաղաքական էվոլիւսիոնի, և որոնք լինելով բարեխիղճ պաշտօնեաներ միապետութեան ձեռքի տակ, դառնում են բարեխիղճ պաշտօնեաներ և՛ յեղափոխութեան շրջանում։ Փոքրաթիւ են այդպիսիները։ Միւս տեսակինը, մեծամասնութիւն կազմողները, նրանք են, որոնք ծայրայեղօրէն հաւատարիմ իրենց սիրած մթնոլորտին, աւազակութեան և հարստահարութեան բէժիմին, քաղաքական փոփոխութեան դէպքում՝ մնում են ներքուստ անփոփոխ, էվոլիւսիոնի չեն ենթարկւում և միմիայն իրենց և իրայինների շահերը փրկելու յոյսով՝ դիմում են սիրաշահող միջոցների և նոյնիսկ խաբուսիկ ու աղերսական ձևերի, որպէս զի զինաթափ անեն թշնամուն, բաժանեն չափաւորները ծայրայեղներից և այդպիսով պառակտում գցեն դիմադրական բանակի մէջ և յաղթանակեն։ Այդպիսիներից է Թիֆլիսի պալատի նոր տանտէրը — Վլորնցովի անունը կրող՝ բայց նրա քաղաքական միտումներից զուրկ շառաւիղը, որ ուղարկւում է Կովկաս ոչ թէ միապետութեան կոնած շղթաները քակտելու որոշումով, այլ ապստամբ երկիրը խաղաղեցնելու խաբեբայական ծրագրով...

Այդ „ծրագիրը" չէ մշակած Նոյնիսկ Վիտտէի կամ Սվեատոպոլկ-Միրսկու շրջապատի մէջ — աւելի ազատամիտ շրջանների մասին խօսք էլ չէ կարող լինել — այլ այն խաւերում, ուր թագաւորում են մեծ իշխան Վլադիմիր, Պօբեդոնոսցեվ, Բուլիգին և նրանց երևելի և աներևոյթ ներշնչողները, և որոնց քաղաքական հաւատամքը մի է և անփոփոխ — անսահման միապետութիւն և միմիայն միապետութիւն...

„Օգոստափառ" ծրագիրը, ի՞նչ խօսք, ոչ մի կէտում չէ համապատասխանում այն ծրագրին, որ յեղափոխական տարրը առաջադրել է բռնակալութեան, և որի առաջին, հիմնական և անպայման կէտն է՝ միապետութեան տապալումը և ստեղծումը մի բոլորովին նոր բէժիմի, հիմնուած ոչ թէ այժմեան կազմի քնքոյշ ձևափոխութեան, այլ նրա հիմնայատակ փլատակների վրայ։ Երէկւայ չափաւոր տենչանքները, — ակնյայտնի է այդ — անցան անդարձ կերպով։ 80-ական թուականներին Կովկասը ուրիշ բան չէր պահանջում, բայց եթէ՝ հայրական հովանի՝ „բարեխնամ" կառավարութեան կողմից, բարեխղճութիւն՝ գրաքննիչի կողմից, հալածանքի չափաւորութիւն՝ միապետական վարչութեան կողմից։ Այն չափաւոր օրերից 25 տարի է անցել։ Եւ այդ 25 տարին շատ բան սովորեցրեց նոյնիսկ քաղաքական կարճատեսներին։ Նա հասկացրեց, որ բարեխնամութիւնը՝ կառավարութեան, բարեխղճութիւնը՝ գրաքննութեան, չափաւորութիւնը՝ վարչութեան համար ոչ թէ նրանց յատկանիշն է, հրամայական և անբաժան, այլ լոկ քմահաճոյք, անցողական և երերուն։ Նա հասկացրեց, որ ժողովրդական ազատ և կանոնաւոր զարգացումը, օգոստափառ միապետների և բարեխնամ կառավարութեան ձեռքին չէ, այլ իր՝ ժողովրդի ձեռքին, որ նա ինքը պիտի լինի երկրի վերապետը, ստեղծողը օրէնքի, կառավարչական ձևերի, անսահման տէրը իր հասարակային խաղաղութեան, իր մտքի, իր տնտեսութեան։ Նա հասկացրեց, վերջապէս, որ երկրի կանոնաւոր զարգացումը կըսկսի միայն այն օրից, երբ հրամանն ու օրէնքը կըգայ ոչ թէ անցեալ կարգերով ստեղծուած բռնակալ գահերի շրջապատից, հաստատուած ստրուկ ամբոխի համբերատար ուսերին, այլ ըմբոստութեան կրակի մէջ բովուած ժողովրդի ազատ կրծքից...

Այդ „հասկացողութիւնը" յաղթանակել տալու համար անթիւ զոհ տրուեց, շատ արտասունք հոսեց — աքսոր, բանտ, գործադուլ, ապստամբութիւն, յեղափոխական կռիւ, արիւն, դիակներ։ Եւ զոհերի ու դառնութեան այդ կօլոսալ քանակը կրկնակի զօրեղացրեց, տասնապատկեց առաջադրած պահանջների ուժն ու արդարութիւնը, և այժմ, այնքան զոհերից յետոյ, յեղափոխական արեան այնքան առատ հոսանքի դիմաց, մանկական միամտութիւն է՝ անդրադառնալ հին երգերին, ինչպէս այդ անում են Պետերբուրգի „մեծամեծները", և կամ նրանց կողմից բորբոքուած ծայրերն ուղարկող կառավարիչներն ու փոխ-արքաները՝ յանձին Մաքսիմովիչների և Վլորնցով-Դաշկովների...

Դրան ապացոյց այն իրողութիւնը, որ այդ օրինակ „խաղաղեցնող" յայտարարութիւններից յետոյ իսկ և իբրև նրանց պատասխան՝ Լեհաստանը և Կովկասը նոր մղում

տեցին յեղափոխական մարտին, և այժմ ներկայանում են իբրև երկու հնոցներ, ուր աւելի քան պետութեան այլ կէտերում, բորբոքւում է ապստամբական կրակը։ Գիւղացիներ, բանւորական խմբեր, տէոօրիստներ, կոմիտէներ — բոլորն էլ, շաղկապած կամ անջատ եղանակով, նոյն երգն են երգում, բոլորն էլ նոյն պահանջներն են առաջադրում, պահանջներ հիմնական վերանորոգութեան և ոչ թէ ազերսանք կամ քաղաքական մուրացկանութեան իղձեր, այնքա՜ն ցանկալի միապետարանի հաւատարիմ ներկայացուցիչներին։

Եթէ կովկասեան նոր փոխարքան ականջներ ունի, թող լաւ լսի այդ պահանջների բոլոր կէտերը, և գէթ շիտակութիւն ունենայ՝ զեկուցագրելու Պետերբուրգի իր հովանաւոր-բարեկամներին, թէ որքա՜ն բուռն են այդ պահանջները և ինչ աստիճանի հրամայական։ Կովկասից զեկուցագիրներ շատ ստացուեցին մայրաքաղաքում։ Զեկուցագրեր՝ ստայօդ և թունալից, զեկուցագրեր՝ à la Գոլիցին, հիմնուած ոչ թէ փաստերի, այլ նրանց հեղինակի հիւանդոտ և բորբոքուած երևակայութեան վրայ։ Հետևանքները ակներև են։ Եւ թող այդ հանգամանքը լաւ դաս լինի „խոստումնաբեր“ կոմսին, որը ուղարկւում է Կուրի հովիտը այնքա՜ն աղմկայոյզ մի ժամանակ... երբ ոչ միայն անհանգիստ տարրերը, այլ մինչև իսկ պաշտօնական ժանիքներում ճզմւած գումաններն ու ընկերութիւնները, նոյնիսկ քաղցից հալ ու մաշ եղած գուրիական գիւղացիները՝ յեղափոխական-սոցիալիստական ծրագիրներ են առաջ մղում, պահանջելով Միապետութեան տապալում, Հիմնադիր ժողովի գումարում, հողերի համայնացում, և այլ բազմաթիւ բէֆորմներ...

Երևի Վորոնցով-Դաշկովի շքեղապատը իրեն մխիթարում է այն յոյսով, որ մի քանի քաղցր զիջումներ անելով հայոց կաթողիկոսին կամ վրաց ազնվականութեան պարագլխին, փոխ-արքայական վստահութիւն արտայայտելով մահմէտական բէգութեան — կարելի է մոռացնել տալ տարիների կսկիծն ու թալանը, շղթաները ու հալածանքը։ Կամ գուցէ նա մտածում է, որ Ստեփանովիչի տեղ Մելիքովին Թիֆլիսի նահանգապետ նշանակելը, Նակաշիձէին տեղափոխելը, Գակկելին գրաքննական կոմիտէի նախագահութիւնից հեռացնելը, մի քանի լրագիր թոյլատրելը, և կամ վերջապէս մի խորհրդակցութեան գումարումը, „բաղկացած ազնվականութեան, քաղաքացիների և հոգևորականութեան ներկայացուցիչներից“, բաւական է հանգցնելու սոսկալի հրդեհը, որ բռնկել է բոլոր մտքերն ու սրտերը, դադար տալու քաղաքական այն մեծ ալեկոծութեան, որի ցնցումից ուժգնօրէն երերւում է ցարերի գահը, որ ց՚այժմ կարծւում էր անսասան և յաւիտենական...

Խորապէս սխալւում է նա։

Ամբոխային կուրութիւնից քննական վերաբերմունքին անցած հասարակական միտքը՝ շնորհ և զիջումն չէ, որ ուզում է այժմ, այլ վերջնական ապահովութիւն իր իրաւունքների, իր դիրքի և զարգացման։ Այդ ապահովութիւնը գոյութիւն չունի։ Միապետութիւնը ոչ միայն չէ տալիս ժողովուրդներին քաղաքական երաշխաւորութիւններ, այլ իր գոյութեամբ իսկ, նա հերքում է այդ օրինակ ապահովութեան երաշխաւորումը։ Նա ասում է. „Ես քո տէրն եմ, դու իմ հպատակը, ծառան, ստրուկը։ Կը տամ երբ կամենամ, ինչպէս և ի՛նչ կամենամ։ Կ՚առնեմ քեզանից երբ կ՚ուզենամ, երբ սիրտս, քմահաճոյքս, շահս այդ պահանջի“։ Եւ նա ոչ միայն ասում է այդ, այլև գործադրում։

Դոյն օրինակ անվստահելի և խաբուսիկ պայմաններում՝ հպատակները նման են — թող ներւի այս համեմատութիւնը — իրաւազուրկ կնոջ, այս բառի վատթարագոյն իմաստով, որին կարելի է ուզած ժամանակը սիրաշահել, համբուրել, քամել նրանից բոլոր հաճոյքները և մի լոպէ յետոյ, երբ տիրապետողի քմահաճոյքը յագեցած է՝ վիրաւորել, ծաղրի առարկայ դարձնել, զրկել, նոյնիսկ դուրս վռնդել...

Եւ ռուսական միապետութեան ծիրանակիր պետերը իրենց գործակալների ամբողջ կազմով, որ կառավարութիւն անունն ունի, վարւում են հպատակ ժողովուրդների հետ, ճիշդ այնպէս, ինչպէս փողաւոր տէրը վարձու կնոջ հետ։ Ալէքսանդր Առաջին, երբ այդ ձեռնտու էր, համբուրեց, գրկեց, սիրաշահեց ֆիններին, լեհերին և հայերին, իսկ Ալէքսանդր Երրորդ նրանց դուրս նետեց իր գրկից այնպէս, ինչպէս դուրս են նետում „ձանձրացնող“ սիրուհիներին։ Ալէքսանդր Երկրորդ, իր կայսերական „հանգստութեան“ համար, սիրոյ համբոյրներ գրոշմեց ռուս գիւղացիութեան այտերին, իսկ նրա թոռը՝ Նիկոլայ Երկրորդ՝ վերաբերւեց այդ „անձնուէր“ գեղեցկուհուն այնպէս, ինչպէս յագեցած շուայտոտ։ Հրաշարակ է գալիս օգոստափառի ուսէ մանկլաւիկ — մի Պլէվէ. Հայոց եկեղեցին նրան թաւում է վտանգաւոր, հակապետական պրոպագանդի քուրա։ Եւ նա աքացի է տալիս այդ թոյլ, անօգնական „կնոջ“, իր զինւորական կրունկներով... Նրան յաջորդում է Վորոնցով-Դաշկով, որ նորից փորձում է իր գրկի մէջ առնել՝ իրաւազուրկ „կնոջ“, իր „նորաձև հաճոյքներին“ այլ կերպ լրումն տալու համար։ Եւ Պլէվէն ու Վորոնցով հատ հատ չեն։ Ահա Գոլիցին։ Նրա „քէֆը“ տալիս է խլել, աքսորել, պատժել, բանտերի մէջ փտեցնել մարդոց։ Ահա Բորբիկով — նա „անհրաժեշտ“ է գտնում ոչնչացնել ժողովրդական իրաւունքները, տակնուվրայ անել սահմանադրութիւնը, լրտեսութեամբ հալումաշ անել երկիրը։ Ահա Լեհաստանը՝ Մուրավիովների ճանկերում, Մոսկուան՝ Սերգէյի, Պետերբուրգը՝ Տրէպովների ճիրաններում։ Նրանք միապետական կապրիզների արտայայտութիւններ են, որոնք նախանձելի հետևողութեամբ միմեանց յաջորդում են և խաղում գահի հպատակ ժողովուրդների հետ այնպիսի սանձարձակ լրբութեամբ, որի նմանը ներելի, տանելի և թոյլատրելի է միմիայն բռնարաններում, գահերի ոտքերի տակ ճզմւած անբախտ երկրների մէջ...

Եւ ո՞վ է այն քաղաքական անհեռատեսը, որ պնդի թէ այժմեան „քաղցրախօս“ Վորոնցով-Դաշկով մի քանի ամսից յետոյ չի փոխի իր լեզուն, ինչպէս արեց Գոլիցին, չի ցանի արտասուք ու արիւն նոյն այն վայրերում, որոնց նա „մեղր ու կարագ“ է խոստանում, և չի գոռայ՝ „լռեցէք, այլևս ոչ մի բողոք, ոչ մի ժողով, ոչ մի պահանջ“, կամ թէ ինքը Նիկոլայ Երկրորդ, թեթևացած եապօնական և յեղափոխական հարւածներից՝ չի բանայ վրէժխնդրութեան դարագլուխը՝ վերահաստատելու „միապետութեան անփոփոխելի սկզբունքները“ — իբրև վերջնական պատասխան այն նորաշունչ հովերին, որոնք այնքա՜ն հաճոյքով օրօրել են Երիտասարդ-Ռուսաստանը...

Այդ երաշխաւորութիւնը, քաղաքական այդ լուրջ ապահովութիւնը բարձրագոյն հրովարտակների, փոխարքայական հեռագիրների, կամ միապետների յօժարակամ խոստումների մէջ չէ, ինչքան էլ հանդիսաւոր բնոյթ ունենան նրանք, այլ այն ստիպողական փոփոխութեան մէջ, որ ըմբոստ ժողովուրդը, թեւաւորուած յեղափոխական տարրերով, պիտի թելադրէ այժմեան կառավարութեան և հարկադրի նրան յետ քաշուել։ Եւ դրա իրականացումը տեղի կ'ունենայ այն օրը միայն, երբ գահերի բարձրութիւնից վայր կը գլորուի միապետական գաղափարը և նրա տեղ կը բազմի ժողովրդական կամքը, իբրև միակ վեհապետ, օրինական և խելացի...

... Կռիւը կը լինի անդադրում և յամառ։ Փոքրիկ զիջումներն ու քաղաքական կարկատանները երբէք չեն կարող մարել բորբոքուած հրդեհը։ Յեղափոխական շունչը կը կայծէ նրան մինչև այն օրը, երբ գայիսօնն ու թագը կը դառնան ժուզէյների զարդ, Պետրօ-Պավլովսկիի տեղ հպարտօրէն կը բարձրանայ Ազատութեան արձանը, կայսերական ու փոխարքայական պալատները Պետերբուրգ, Վարշաւա և Թիֆլիս կը վերածուին ժողովրդական պարլամենտների։

Այդ օրը միայն զինադադար կը լինի։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ցարիներ ու տարիներ լուութեան ենթակայ՝ Կովկասի ազգաբնակութիւնը, վերջապէս, իրաւունք ստացաւ բանալ իր բերանը և թոթովել քաղաքական մի քանի ցանկութիւններ։ Այդ քաղաքական թոթովանքը ազատ քաղաքացիների ազատական պահանջը չէ, արտասանուած կատարեալ ազատութեան մէջ, այլ բարձրագոյն իշխանութիւնից գիջումներ ապատող ժողովրդի իղձը, սահմանափակուած կառաւարչական շրջանակներով։

Այդ սահմանափակումների մէջ էլ, սակայն, արտափայլում են ազատութեան և իրաւունքի ծարաւ ազգաբնակութեան անմիջական յաւերն ու կարիքները։ Պաշտօնական թղթաւորութեան համաձայն՝ այդ կարիքները արտայայտուած են հայերի, վրացիների և մահմէտականների կողմից առանձին առանձին. վրացիներին՝ ս'բաց ազգայնականութեան ուղերձի մէջ. մահմէտականներինը՝ յատուկ պատգամաւորութեան միջոցով, իսկ հայկականը՝ այն ժողովի միջոցով, որ կազմուեցաւ 24 հայաբնակ վայրերից եկած ներկայացուցիչներից, Թիֆլիսում։ Ահա հայկական քաղաքական ծրագրի կէտերը, որ փոխառնում ենք կովկասեան լրագիրներից.

1) Մտցնել Անդրկովկասում տեղական անդասակարգ ինքնավարութիւն լայն հիմունքներով, հիմնելով ա) ինքնավար մանր զեմստվային միութիւն, բ) գաւառական (առանց նահանգականի) զեմստվո, առանձնացնելով քաղաքային ինքնավարութիւնները իբրև առանձին միութիւններ և գ) մէկ Հայանդրկովկասեան զեմստվային ժողով, որը իրաւունք պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները։

2) Մտցնել երդուեալների դատարան ընդհանուր դատաստութեան բոլոր գործերի համար, նոյն թւում նաև քաղաքական, կրօնական, պաշտօնավարական և մամուլի գործերի համար. մտցնել նոյնպէս ընտրեալ հաշտարար դատաւորների հաստատութիւնը։ Թոյլ տալ դատաւորութիւնը հաշտարար դատաստանական հիմնարկութիւնների մէջ տեղական լեզուներով։ Պարտադիր անել, որ հայաշատ տեղերում դատաւորները և դատաստանական քննիչները գիտենան հայերէն լեզուն։

3) Ոչնչացնել դասակարգային առանձնաշնորհումները։ Հաւասարեցնել կանանց և տղամարդկանց իրաւունքները։

4) Ազատութիւն խօսքի, ժողովների, համախմբումների, գործադուլների և ընկերակցութիւնների։ Կարգադրել, որ մարդասիրական, քաղաքակրթական, հրատարակչական և ուրիշ կրթական հաստատութիւնները, որպէս և պարբերական հրատարակութիւնները հիմնուեն և բացուեն յայտարարական (եաւօշնիյ) ճանապարհով։ Ազատել տեղական լեզուներով հրատարակուող ամէն տեսակ աշխատութիւնները գրաքննութիւնից և պատասխանատու անել մամուլը բացառապէս դատաստանի առջև։

5) Լեզուի ազատութիւն ժողովներում։ Գործավարութիւն գիւղական հաստատութիւնների մէջ, նաև գիւղական հասարակութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ տեղական լեզուով։

6) Անձնաւորութեան և բնակարանի անձեռնմխելիութիւն։ Ոչնչացնել անցագրի սիստեմը կայսրութեան սահմանների մէջ։ Վերացնել վարչական պատիժներն ու տուգանքները և ոչնչացնել ուժեղացրած հսկողութիւնը։ Վերացնել 1898 թ. հրատարակուած ոստիկանական զեմստվային պահապանների օրէնքը, հիմնել նոր զեմստվային ոստիկանութիւն և ենթարկել այս ոստիկանութիւնը զեմստվոներին, իսկ քաղաքային ոստիկանութիւնը՝ քաղաքներին։

7) Ընդհանուր, պարտադիր ձրի տարրական ուսում։ Լիակատար ազատութիւն տալ մասնաւոր նախաձեռնութեանը՝ բանալու յայտարարական ճանապարհով ամէն տեսակի և ամէն կարգի ուսումնարաններ և դպրոցական հաստատութիւններ։ Մասնակից անել հասարակական ուժերը պետական միջնակարգ և ստորին դպրոցների կառավարութեան գործին։ Բանալ համալսարան Թիֆլիզում երկու սեռի անձանց համար, կովկասագիտութեան և տեղական լեզուների ամբիոններով, նաև բանալ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ Անդրկովկասում։

8) Պարտադիր անել, որ տարրական դպրոցներում դասաւանդութիւնը հայ ծագում ունեցող մանուկների համար լինի հայերէն, աւանդելով և ռուսերէնը, որպէս գլխաւոր առարկաներից մէկը։ Լուրջ հիմունքների վրայ դնել հայոց կրօնի, հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան ուսուցումը պետական դպրոցներում ուրիշ գլխաւոր առարկաների հետ հաւասար սկզբունքներով։

9) Խղճի ազատութիւն։ Վերացնել բոլոր դաւանական և կրօնական սահմանափակումները։ Ազատութիւն տալ երդուելու մայրենի լեզուով բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների մէջ։

10) Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերցնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները, մանաւանդ՝ ա) հայոց եկեղեցու կալուածքները, կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնները կառավարելու գործում, բ) Էջմիածնի սինոդի անդամների, թեմական առաջնորդների, յաջորդների և ուրիշ հոգևոր վարչական պաշտօնեաների համայնական ընտրութեան գործում, և գ) թէ ռուսահայկական թեմերի և թէ ամենայն հայոց հոգևոր-ազ-

գային ժողովները պարբերաբար գումարելու գործում։

11) Վերադարձնել Հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները և կալուածքները, վերացնելով 1884-ից մինչև 1903 թ. բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ ծխական դպրոցներին և թէ այդ դպրոցների և հայոց վանքերի, եկեղեցիների և հոգևոր դպրոցների կալուածքներին։

12) Հիմնել Կովկասում հայ կաթոլիկական թեմ թեմական առաջնորդով, հայազգի և հայ-կաթոլիկ եպիսկոպոսով։

13) Մտցնել պրոգրեսիվ եկամտային հարկատուութիւն, ոչնչացնելով առաջնակարգ անհրաժեշտ իրերից առնուող անուղղակի հարկերը։

14) Բարւոքել բանւորական աշխատանքի պայմանները, կանոնաւորելով օրէնսդրական ճանապարհով բանւորական օրաժամը և վերացնելով բանւորական միութիւնների ու ընկերակցութիւնների կազմակերպութեանը խանգարող սահմանափակումները։

15) Պարտադիր անել, որ միւլքադարական և ժամանակաւորապէս—պարտաւորուած գիւղացիների հողաբաժինները (նադէլ) ետ գնեն ամբողջ համայնքների կողմից գանձարանի աջակցութեամբ, Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով։ Աջակցել որ գիւղական հասարակութիւնները կարողանան ետ գնել իրենց հողաբաժիններից դուրս գտնուող այն մասնաւոր կալուածատիրական հողերը, որոնցից նրանք շարունակ օգտւում են, և պարտաւորեցնել որ գիւղացիական բանկը տայ նրանց այդ նպատակի համար փոխառութիւններ։

16) Թոյլ տալ մասնաւոր կրեդիտային հաստատութիւններին գործողութիւններ անել գիւղացիական հողերի յետգնման վերաբերեալ։

17) Նախադաս իրաւունք տալ տեղական սակաւահող և անհող գիւղացիներին բնակւելու ազատ արքունի հողերի վրա Անդրկովկասի սահմաններում։ Դիւրութիւններ տալ գիւղական ազգաբնակութեանը օգտւելու անտառներից, դաշտակներից և արօտատեղիներից։

18) Վերցնել ռուսաց հպատակութիւնը ընդունած թիւրքահայ գաղթականներին վերաբերեալ սահմանափակիչ և բացառիկ օրէնսդրութիւններն ու կառավարչական կարգադրութիւնները և տալ նրանց ուրիշ հպատակների հետ հաւասար իրաւունք հողաբաժիններ ստանալու Անդրկովկասի սահմաններում։

19) Հայ զինուորների ծառայելը խաղաղ ժամանակ Կովկասի սահմաններում։

20) Վերադարձնել վարչական իշխանութեամբ աքսորուած հայերին և ներում շնորհել քաղաքական և կրօնական գործերի համար տուժող բոլոր անձերին։

Այս բոլոր բարւոքումները իրագործելու համար անհրաժեշտ է՝ հրաւիրել համառուսական ներկայացուցչական ժողով ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեան սկզբունքներով, տալով հայ ժողովրդին իրաւունք մասնակցելու այդ ժողովին Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով։

Վրացիների և մահմեդականների խնդրի կէտերը առաջ կը բերենք միւս անգամ և կ'աշխատենք վերադառնալ այդ հարցին մի քանի դիտողութիւններով։

Առայժմ մի նկատողութիւն։

Որ ռուսաց կառավարութեանը յաջողւել է արդէն իր իրամատ բանալ մասնաւորապէս հայ և մահմեդական ժողովուրդների միջև. — դրան ապացոյց Բաքուի և Նախիջևանի արիւնաս դէպքերը և այն երկուստէք ան՝ատահութիւնը, որ տիրում է ամբողջ Անդրկովկասում որ այդ յաջողութիւնը աւելի ևս պիտի գրգռի միպետութեան եռանդը, և Զօրենցով-Դաշկովը կոչուած է լինելու մի նոր Շաբիր-փաշա, որը նոյնպէս ուղարկուեց „բարեկարգումների և խաղաղացման" առաքելութեամբ—նշանները արդէն երևում են, նոյն իսկ մի այնպիսի չէզոք կէտում, ինչպէս է Թիֆլիսը։

Ս.յսպիսով՝ շնորհիւ բռնապետութեան, Կովկասը ներկայանում է ամբողջ աշխարհի առջև իբր մի վայր, ուր աղգայնական հակառակութիւնները ստացել են ծայրայեղ սուր կերպարանք և ուր իբր թէ խօսք էլ չի կարող լինել այն ինքնավարութեան մասին, որին ձգտում է Կովկասը։

Կովկասի ժողովուրդները չէ թէ այս ստանձգութիւնների դէմ ոչինչ չեն անում,—չէ, բայց կառավարութեան այս սիստեմատիկ և յամառ եռանդի հանդէպ բաւական չէ մղկիթներ այցելելը, հոգեհանդիսաներին մասնակցելը։ Համերաշխութեան գաղափարը պէտք է դուրս գայ խօսքի, քարոզի սահմանից և մարմնանայ որոշ ձեռնարկների մէջ, և դրա համար առիթներ ներկայանում են ոչ միայն յեղափոխական կուսակցութիւններին, այլ և նրանց, որոնք „լեգալ" հողից իջնել չեն սիրում։ Այդ տեսակ պատեհ առիթ էր „պահանջների" մշակելու խնդիրը։ Իբր ազգի „ներկայացուցիչներ" հաւաքուած՝ հայ, վրացի և թիւրք ինտելիգենտները պարտաւոր էին ոչ թէ այս կամ այն ազգի պահանջները առանձին դնել և որանով աւելի ևս շեշտել կովկասեան ազգերի ձգտումների այլազանութիւնը,—մի բան, որ ամէն տեսակէտից հաճելի է կառավարութեանը, այլ համախմբուած՝ ներկայացնել միայն մի պահանջ Կովկասի պահանջը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ

(Շարունակ. № 4-ի եւ վերջ)

Քաղաք վերադառնալով՝ իր տեղեկագիրը ներկայացուց կառավարութեան, պահանջելով պէտք եղած բռնի զօրութիւնը՝ գերի կոյսերը ետ բերելու համար, բայց այս ճշմարտութիւնը, որ դառն էր քիւրդերուն և անոնց պաշտպաններուն, նոր աղէտի մը պատճառ եղաւ դժբախտ Նագրի պէյի, որ ամբաստանուեցաւ իբր թէ քիւրդերէն դրամ առած ըլլայ։ Ասկէ ծագում առաւ իր և կուսակալին միջև խնդիր մը, որ վերջացաւ Նագրի պէյի աքսորավայրը խարբերդ փոխադրելով։ Մէզէրէ հաստատուելէ ետք, իր ընտանիքին պէտքերուն հասնելու համար, սկսաւ փաստաբանութեամբ պարապիլ և քիչ ատենուան մէջ իր հմտութեամբ, ուղղամտութեամբ ու արդարասիրութեամբ գրաւեց բոլոր ժողովրդի սիրտը։

Արդէն խօսեցանք թէ հայերու վերջին դատավարութեան՝ ի՞նչ ուղղամտութիւն և ճշմարտախօսի կորով ցոյց տուաւ, առարկայ ըլլալով կարգ մը մոլեռանդ և իր պաշտպանողական ճառին մէջ իր արդար զայրոյթին ենթարկուած պաշտօնեաներու քինախնդրութեան։ Օրինակի համար արգիլեցաւ իրեն որ չտեսնուի հռչակաւոր Գուատ փաշայի վերջերս աքսորուած զաւկին՝ Մուհամմէտ Ալի պէյի հետ։ Նագրի պէյ մերժեց այս անհարկի արգելքը և փոքր սուլթանի բռնապետական այս քմահաճոյքը, քանի որ Մուհամմէտ Ալի պէյ յարաբերութենէ արգելուած չէր օրէնքով։ Մուհամմէտ Ալի պէյի մասին արդէն այս գրութեան կից իր բարեկամներէն մէկուն կողմէն գրուած առանձին գրութիւն մը կը ղրկենք, որ իր նշանակելի շոհագրգռութիւնն ունի, պարունա-

կելով կարգ մը խիստ հետաքրքրական և վաւերական իրողութիւններ պալատին շուրջէն և հռչակաւոր Ֆուատ փաշայի նախորդ անցքերէն։

Ասկէ մօտաւորապէս երկու ամիս առաջ խուզարկութեան ենթարկուեցան Նադրի պէյ, Ալի պէյ և Էօմէր Խայրի էֆէնտիները։ Նադրի պէյի տունէն առնուած էր միայն ասեղնագործութիւն մը, որուն վրայ նշանակուած էր, ֆրանսերէն լեզուով, ֆրանսիական հանրապետութեան նշանաբանը՝ „Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն“։ Ալի պէյի սենեակէն առնուած էր լուսանկարներու կրուպ մը, որոնց մէջ կը գտնուէին՝ սուլթան Ճէմիլի, սուլթան Մուրատի, Ալի Սուավիի, Միտհաթ փաշայի, Ճէվտէթ էֆէնտիի և ուրիշ կարգ մը նշանաւոր թիւրք հայրենասէրներու և անձնաւորութեանց պատկերներ։ Էօմէր Խայրի էֆէնտիի սենեակէն ալ ձեռք բերուած էր յուշատետր մը, ուր կը գտնուէին եղեր ասկէ անկէ հաւաքուած կարգ մը ոտանաւորներ, որոնց շարքին մէջ կայ եղեր նաև ասկէ 35-40 տարի առաջ Զիա փաշայի անծանօթ անձի մը ուղղուած մէկ երկու գրութիւնները, որոնցով կ՚ընդդիմախօսէ եղեր կայսերական գերդաստանին մեծէ մեծ ժառանգական իշխանութեան փոխանցման։ Ըսենք անմիջապէս թէ, Էօմէր Խայրի էֆէնտի 35-36 տարեկան իւլէմա մըն է, զաւակ նշանաւոր Խօճա Նուսուհի էֆէնտիի, որ սուլթան Մէճիտի օրով, իր հայրենիքի սիրուն, երկու անգամ աքսորման դատապարտուած է։ Էօմէր Խայրի իր հօրը ճշմարիտ դաստիարակութեամբը սնած՝ կարող իւլէմա մըն է՝ ունենալով բանաստեղծական և գրագիտական կարողութիւն, ինչպէս նաև իմաստասիրող մտքի մը յատկութիւնները։ Ասկէ երեք տարի առաջ Պօլսոյ մէջ հետևեալ խօսքը կ՚ըսէ. „Ֆէսագա չալըշան խաֆիյէլերի էօլտիւրմէք շէրան լազըմ տըր“ (խռովութիւն սերմանող լրտեսները սպաննել, ըստ շէրիաթի, հարկաւոր է), որուն վրայ անմիջապէս կ՚աքսորուի Խարբերդ, առանց ամսականի, առանց քննութեան, որովհետև արքայական գերդաստանը այս սերնդին դէշ աչքով կը նայի, նկատի ունենալով Պօլսոյ և Անատոլիի մէջ Խօճա Նուսուհի էֆէնտիին և իր տան ազդեցութիւնն ու հմայակրանքը։ Բայց քանի մ՚ամիս ետքը Խարբերդէն դէպի Կովկաս կը յաջողի փախչիլ, ուր այնտեղի իսլամները Կովկասի օսմանեան դեսպան Մուսա փաշա զատէ Պէքիր պէյի միջոցով հանրագիր մը կ՚ուղղեն կայսեր, Էօմէր էֆէնտիի ներումը խնդրող։

Զայն ձուն չ՚ելլեր։ Տրապիզօնի վախճանեալ նախորդ կուսակալ Գադրի պէյի միջոցով նոր խնդրագիր մը կը ներկայացուի, որուն հետևանքով Էօմէր էֆէնտի ընդ հսկողութեամբ Պօլիս կը տարուի և ուղղակի ոստիկանութեան դրան բանտ կը ղրկուի, հոնկէ Նորէն՝ առանց ամսականի խեղճ ու թշուառ կը ղրկուի Խարբերդ։ Արդ Նադրի պէյ, Մուհամմէտ Ալի պէյ և Էօմէր էֆէնտի գաղտնի հարցաքննութեան ենթարկուեցան, եղած խուզարկութիւններէն ետք, կուսակալ Հասան փաշայի նախագահութեամբ կազմուած ատեանի մ՚առջև, ուր գատրն (դատաւոր) իբրև հարցաքննիչ և մեքթուպճին քարտուղար նշանակուած էր։ Այս երեքն ալ կ՚ամբաստանուէին իբրև կայսեր դէմ դէշ լեզու գործածողներ, նախորդ կուսակալ Բէուֆ պէյի, ատոր հօրեղբօր Հագգը պէյի Պօլիս տուած մէկ գաղտնի իխպարնամէի հետևանքով։ Վերջապէս նախնական հարցաքննութիւնէն ետք՝ թղթերը դատարանին յանձնուեցան։

Կ՚ըսուէր թէ խուզարկութիւնները տեղի ունեցած էին՝ յատկապէս Պօլիսէն հասած մասնաւոր իրատէի մը վրայ, ինչպէս որ օրը օրին ասկէ կը հաղորդուէին եղած քննութեան արդիւնքը Պօլիս, նոյպէս հեռագրով։ Երեքն ալ բանտարկուեցան, ըսել է Նորէն մասնաւոր իրատէի մը համաձայն։ Նախնական եղեռնագատ ատեանը՝ լսելէ ետք ամէն ազգէ 15-է աւելի վկաներ, որոնք ամէնքն ալ առանց բացառութեան ի նպաստ ամբաստանեալներու վկայեցին՝ Նադրի պէյ և Ալի պէյ վեցական ամսուան, իսկ Էօմէր էֆ. 2 տարուան բանտարկութեան դատապարտուեցան։ Միմիայն ծանօթ իխպարնամէին հեղինակ Հագգը էր, որ գէշ կերպով վկայեց, որուն վկայութիւն ալ ըստ օրինի արժէք չ՚ունի արդէն։ Հագգը ասկէ առաջ Բէուֆ պէյի տունը ապրող պորտաբոյծ մըն էր, երբ կուսակալը պաշտօնանկ եղաւ, մնաց հոս $2^1/_2$ ոսկի ամսականովը իբրև կուսակալութեան թարգման, բայց ասդին անդին շատ պարտք ունէր, չէր կրնար ապրիլ, ուստի այսպիսի ստոր միջոցի մը դիմելով՝ կը խորհէր պաշտօն մը ապահովել։ Եւ արդէն քիչ ատենէն փախաւ ասկէ՝ ժողովուրդը կեղեքելէ և ուրեմուն ոսկիէն աւելի անվճար պարտք թողելէ ետք, խեղճ արհեստաւորներու պահանջը։

Դատապարտեալները այս անարդար վճռոյն դէմ բողոքեցին, դիմելով վերաքննիչ ատեանի։ Սակայն իմացուեցաւ ստուգօրէն թէ բարձրագոյն հրաման մը կը յանձնարարէր վերաքննիչ ատեանին՝ վաւերացնել նախնական դատարանի վճիռը։ Հետևաբար վերաքննիչ ատեանը՝ հնազանդելէ զատ բան մը չկրցաւ ընել։ Այսպէս, առանց վկայի, առանց ապացոյցի՝ դատապարտուեցան երեք կարևոր թիւրք աքսորեալներ, որոնց իրը թէ զրկանքն ու հեռաւոր գաւառներու մէջ տառապանքը հերիք չ՚ըլլային։ Բռնապետութեան առջև խտիր չկայ ո՛չ հայուն, ո՛չ թիւրքին. թշնամին հասարակաց է, արիւնոտ թաթը կը ծանրանայ ամէնուն ալ ուսին վրայ։ Թոյլ բողոքները արդիւնք չունին և չունեցան դժբախտաբար, արեան դէմ արիւն, ակռայի դէմ ակռայ, ահա փրկութեան նշանաբանը։

Որովհետև, ինչպէս կը տեսնուի, Նադրի պէյ կը դատապարտուի՝ լոկ ֆրանսական հանրապետութեան նշանաբանը իր տունը կախած ըլլալուն համար, երբ, տարօրինակ բան, դատավճիռին մէջ այս մասին խօսք մը անգամ ըսուած չէ, այլևս մարդ չի գիտեր՝ դատաւորները ի՞նչ յանցանք վերագրած են անոր. միայն սա ստոյգ է թէ, տխմար ճարտարամտութեամբ մը դատարանը զգուշացած է ֆրանսական նշանաբանին խօսքն ընել իր վճռագրին մէջ։ Ալի պէյ կը դատապարտուի մէկ քանի լուսանկարներու համար՝ որոնք իհարկէ թիապարտներու լուսանկարներ չ՚էին. սա ստոյգ է թէ իր հօրը զաւակն ըլլալը միայն յանցանք սեպուած ըլլալու է, բաւական է որ այդ հայրը ժամանակին Պօլսոյ ջարդերու ատեն արիւնոտ խարոյկահանդէսին մասնակցած չէ և հայեր ու քրիստոնեաներ ազատած է։ Էօմէր էֆէնտի կը դատապարտուի լոկ իր տետրակին մէջ ուրիշ անձի մը մէկ քանի վնասակար սեպուած տողերն ունեցած ըլլալուն համար, որոնց մասին նոյնիսկ օսմանեան օրինագիրքը առանձին պատիժ մը չի սահմաներ։

Այսպէս հայ թէ թիւրք բոլոր ազնիւ և կարևոր անձնաւորութիւնները՝ ոմանք կախաղանի վրայ, ոմանք բանտերու, ոմանք աքսորավայրերու մէջ մաս մաս կը կոտորուին, կը փճանան։ Կը մնան միայն ազատ և յար-

գեած՝ վատերը, մատնիչները, լրտեսները, չարագործները՝ փառաբանելու համար մեծ ոճրագործը, կարմիր Գազանը։

Ե՞րբ պիտի հնչէ „մա՜հ մատնիչներուն և արիւնկզակ Գազանին“ փրկութեան աղաղակը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, 20 մարտի

Երբ հեռագիրը գուժեց անզուգական Քրիստափոր Միքայէլեանի անակնկալ մահը Սոֆիայում, խորին ափսոսանք և դառն կսկիծ տիրեց ամբողջ Սալմաստի հայութեան։ Ի յիշատակ մեծ յեղափոխականի՝ մարտի 17-ին կատարուեց հոգեհանգիստ։

Դեռ վաղ առաւօտեանից՝ խուռն բազմութիւնը հայաբնակ գիւղերից սկսեց հաւաքուել Ղալասար, ուր տեղի պիտի ունենար հոգեհանգիստը։ Հաւաքուել էր մի այնպիսի երկսեռ մեծ բազմութիւն, որ չէր տեսնուած Սալմաստում ոչ մի ժամանակ՝ ո՛չ հանդէսի, ո՛չ հոգեհանգստի, ո՛չ ներկայացման...

Ընդարձակ դահլիճում պատրաստուած էր դիասեղան, որի վրայ դրուած էին պսակներ հետևեալներից.—Մինաբէթի Կոմիտէից, Ծառաստանի ենթակոմիտէից, Հայդուկներից, „Գօլօշեան“ խմբից, „Արբակ“ խմբից, „Զարեւանդ“ խմբից, „Հարաւուլ“ խմբից, „Բարդուղիմէոս“ խմբից, „Զէյթունիկ“ խմբից, „Տարածող“ խմբից, „Լեռն“ խմբից, „Արշալոյս“ խմբից, „Քրիստափոր կանանց“ խմբից, „Զօրա“ խմբից, „Անդրանիկ“ խմբից, „Մուշեղ“ խմբից, „Խարիսխ“ խմբից, „Դերիկ“ խմբից, „Կարօ“ խմբից, Մահալամի հասարակութիւնից, Ղալասարի „Արծրունի“ գրադարան-ընկերութիւնից, „Բաֆֆի“ կանանց բարեգործ. ընկերութիւնից, Սալմաստի ուսուցչական խմբից, Մահալամի ուսուցչական խմբից, Ղալասարի Հայկազեան դպրոցից, Սաուայի երիտասարդներից, Եղբ. Մանասէրեաններից, Ղալասարի վաճառականներից, Եղբ. Բուդաղեաններից, Քիպրիտչեաններից, Յովհաննէս Պետրոսեանից, Յ. Առաքելեանից։

Ժամի 10-ին թափորը շարժուեց դէպի եկեղեցի։ Առաջից գնում էին Ղալասարի և Փայաջուկի դպրոցի աշակերտ-աշակերտուհիները իրենց ուսուցիչների հետ։ Մի խումբ հայդուկներ կարգով շարուած՝ տանում էին պսակները, իսկ նրանց ուղիղ մէջտեղը կանգնած մի հայդուկ՝ տանում էր հանգուցեալի մեծադիր նկարը՝ ամփոփած սև շրջանակի մէջ։ Յետևից մի այլ հայդուկ տանում էր Դաշնակցութեան դրօշակը սև եզրով, որի վրայ աչքի էին ընկնում „վրէ՛ժ, վրէ՛ժ“ բառերը։ Ապա գնում էր հոգևորական դասը. ժողովուրդը գլխաբաց և թախծապատ դէմքով քայլում էր յետևից։ Ժամերգութիւնը աւարտելուց յետոյ, կատարուեց հոգեհանգիստը բակում, որովհետև խուռն բազմութիւնը անկարող էր տեղաւորուել եկեղեցու մէջ։

Հոգեհանգստից յետոյ, ժողովուրդը դիմեց դէպի թատերասրահը, ուր կատարուեց սգահանդէս։ Ժողովրդի մի մասը, շտապութեան պատճառով, տեղ չկարողացաւ գտնել դահլիճում, ուստի մնաց բակում։ Հանդէսը սկսուեց „Մեր հայրենիք“-ով։ Ճառեր խօսեցին Մաշթոց Վ. Փափազեան և ուրիշները։ Պ. Պետրոսեանը արտասանեց մի ինքնուրոյն ոտանաւոր։ Խօսուեց Քրիստափորի յեղափոխական, գրական և հասարակական գործունէութեան մասին։ Մաշթոց վարդապետը իր ճառի վերջում առաջարկեց Ղալասարի հասարակութեան՝ նոյն գիւղի դպրոցում մի որդեգիր պահել՝ ի յիշատակ Միքայէլեանի որը և հաճութեամբ ընդունուեց ղալասարցիների կողմից։

Ժամը 2-ին հանդէսը վերջացաւ։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԿՈՉ

Երեսուն տարուց ի վեր Ռուսաստանում կատարուող անցքերը ահա վեց տարի է, ընդունել են այնպիսի մի կատաղի կերպարանք, որը յուզում է ամբողջ մարդկութեան գիտակցութիւնը։

Այժմ ակներև է, որ ցարի ըէժիմը—յօժարակամ թոնի և ոճրագործ—պատճառ է ոչ միայն Ռուսաստանի կորստեան, այլև մշտական վտանգ է բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների համար։

Ֆրանսիան կապած է ռուս ժողովրդի հետ պարտաւորութիւններով և շահերով։ Նրա համար կարևոր է, որ քաղաքակրթութեան ու ազատութեան դատը յաղթանակէ Ռուսաստանում և նա պարտաւոր է, թէ մարդկութեան և թէ իր առջև, օգնութեան ձեռք մեկնել ցարի հպատակներին,—ռուսներին, ֆինլանդացիներին, լեհերին, հրէաներին, մալօրօսներին, հայերին, վրացիներին, թիւրքերին, բուրիատներին, հնդաւանոներին, դուխօբորներին, շտունդիստներին, որոնք կռւում են ազատութեան համար, մարդու, քաղաքացու իրաւունքների համար։

Ֆրանսիան պարտաւոր է այդ անել. պէտք է, որ նա կարողանայ կատարել այդ։ Իսկ կարողանալու համար՝ հարկաւոր է տեղական լինել։ Անհրաժեշտ է, որ մեր երկրում տեղական լինեն ռուսական գործերին, ծանօթ լինեն ռուս և լծակից ժողովուրդների կարծիքներին։

Եթէ ցարիզմը պատրաստում է մի նոր յունուարի 22, անհրաժեշտ է, որ Ֆրանսիայում տեղական լինեն դրան, և մենք անկախ լինենք ռուս կառավարութիւնից՝ նրա ոճիրները իմանալու գործում։

Ռուսական գործերի հետ ժամանակին ծանօթանալու համար՝ մի քանի ֆրանսիացի քաղաքացիներ, երկու սեռից, որոշեցին ստեղծել մի տեղեկատու կենտրոն և մի բարոյական և դրական յենակէտ նրանց համար, որոնք կռւում են Ռուսաստանում՝ յանուն իրաւունքի։ Այսպիսով Ֆրանսիական ջանքերը յօգուտ ռուս ժողովրդի՝ չեն կորչի և չեն ցրուի, այլ կը կազմեն մի փունջ, մի ամբողջութիւն։

Այդ կենտրոնը, այդ յենակէտը անուանում է «Ռուս և լծակից ժողովուրդների բարեկամների ընկերութիւն»։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ.

ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ	Դ-Ր ԲԻՇԱՐ
ՏԻԿԻՆ ՄԻՆԱՐ-ԴՕՐԵԱՆ	Ժ. Պ. ԼԱՆԳԼՈՒԱ
ՏԻԿԻՆ ՊՈՒՇԱՐԻ	ՊՕԼ ՄԻՆԱՐ ԴՕՐԵԱՆ
ՏԻԿԻՆ Ա. ԷՄԻԼ ԶՕԼԱ	ՊՕԼ ՄԵՕՐԻՍ
Դ-Ր ՕՊԻՒՍՏ ԲՈՐԿԱ	ՊԻԻՍՏԱՒ ՄԻՐԲՕ
ԵՒԺԷՆ ԿԱՐԻԵՐ	ՊՕԼ ՊԷՆԼԵՎԷ
ԱՆԴՐԷ ՇԻՎՐԵՑԻՆ	ԺԱՆ ՊՈՒՇԱՐԻ
ԱՐՄԱՆԴ ԴԻՎՕ	Շ. ՍԵՆԻՈԲՈՍ
ՏԻԿԻՆ Կ. ՖԼԱՄՄԱՐԻՕՆ	ՏԻԿԻՆ ՍԵՎԱԲՐԻՆ
Տ. Է. Պ. ԼՈՒԻ ՀԱՍԷ	ՍՏԵՖԱՆԼԻՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ Ա. ԿԼԵՄԱՆՍՕ

Գանձապահ՝ Ե. ՍԱՇ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՊԻԵՐ ՔԻԱՐ

ՕԳՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԴՐԷ ՄԱԳԴԷՐ

„ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ“ ԾՐԱԳԻՐԸ

(Թղթակցութիւն Կովկասից)

—

Թիֆլիս, 23 ապրիլի

Այս նամակով ուզում ենք խօսել քաղաքական կուսակցութիւններից մէկի մասին, որին երևի վիճակուած է մօտիկ ապագայում կարևոր դեր կատարել և առանց արիւն թափելու՝ տէր դառնալ իրերի վիճակին։ Դա այսպէս կոչուած՝ ռուս զէմէցների կամ լիբերալների կուսակցութիւնն է, որ կապուած է արտասահմանում Ստրուվէի խմբագրութեամբ հրատարակուող „Օսվօբօժդենիէ“ (Ազատագրութիւն) լրագրի հետ և որ յայտնի է „Ազատագրութեան Միութիւն“ անունով։ Իրեն նպատակ դնելով ռամկավարական սահմանադրութիւն Ռուսաստանում՝ այդ կուսակցութիւնը ձգտում է իր նպատակին հասնել, ոչ թէ յեղափոխական ճանապարհներով, այլ կառավարութեան ներկայ ֆունկցիաները անգործութեան դատապարտելով՝ զանազան կոչումների և շքանների ինտելիգենտ տարրերի միութիւններ կազմել և դրանց գործադուլներով չէզոքացնել կառավարչական կարգադրութիւններն ու հիմնարկութիւնները, ինչպէս այդ արեցին բարձրագոյն դպրոցների պրոֆէսորները՝ որոշելով չվերսկսել պարապմունքները, եթէ սեպտեմբերին պետական կարգերը նոյնը կը լինին, ինչ որ այժմ։ Պիրոգովեան բժշկական համագումարին կայացրած որոշումը՝ չմասնակցել կառավարչական ոչ մի սանիտարական մասնախմբի՝ խօլերայի դէմ կռուելու համար, քանի որ այդ մասնախմբերը կրում են կառավարչական և ոչ հասարակական բնաւորութիւն. նոյնանման միութիւններ և որոշումներ առաջ բերել ինտելիգենտ աշխատանքի այլ շրջաններում ևս ու այդպիսով ստիպել կառավարութեանը համաձայնելու և զիջումների անելու, — ահա նրա ծրագրած միջոցները։

Իր այդ նպատակին յաջող և շուտով հասնելու համար՝ կուսակցութիւնը լաւ գիտակցում է, որ հարկաւոր է նաև ուրիշ տարրերի գործակցութիւնը և այդ պատճառով աշխատում է իր ծրագրի մէջ նախատեսել դրանց պահանջներն և բաւարարութիւն տալ։ Մի կողմից նա բանուորներին ութժամեայ բանուորական օր է խոստանում և միւս կողմից միապետութեան ոչնչացման մասին խօսք չի ուզում անել և ընդունում է նրա գոյութիւնը՝ սահմանափակուած իրաւունքներով։ Մի կողմից միապետութեան միաձոյլ ամբողջութիւնն է ուզում պահպանել և միւս կողմից ճնշուած ազգերին լեզի և նախնական ազգային կրթութեան ազատութիւն է խոստանում, որ ամփոփւում է „տեղական լայն ինքնավարութիւն և կուլտուրական ինքնորոշման իրաւունք“ բանաձևում։ Պարզ երևում է ձգտումն՝ այս կամ այն կերպ գոհացնել դժգոհ տարրերին և միացնելով՝ տանել դէպի կռիւ միապետութեան դէմ։ Այս ծրագիրը չգոհացնելով բոլոր դժգոհ տարրերին, գոհացնում է Ռուսաստանի բուրժուազիային և մասամբ էլ թագաւորական տանը, որը ամբողջապէս իր իրաւունքներից չզրկուելու համար, գոհ կը լինի, իհարկէ, մեծ գահի վրայ, թէկուզ սահմանափակուած իրաւունքներով։ Եւ ահա մենք տեսնում ենք այդ կուսակցութիւնը կիսալեգալ դրութեան մէջ՝ այն աստիճան, որ նրա ծրագիրը նորերս հրատարակուեց Պետերբուրգի „Նովօստի“ լրագրում։

Թէ ինչ դիրք կարող են բռնել դէպի այդ կուսակցութիւնը Ռուսաստանում ներկայումս գոյութիւն ունեցող յեղափոխական և սոցիալիստական կուսակցութիւնները և խմբերը,—դա շատ լաւ արտայայտուեց այն ժողովում, որ կայացաւ Թիֆլիսում, երէկ, ապրիլի 22-ին։ Մի խումբ ինտելիգենտների նախաձեռնութեամբ գումարուած այդ ժողովում „ազատագրութեան միութեան“ կուսակցութեան մի յայտնի ներկայացուցիչ ծանօթացրեց իրենց հիմնական սկզբունքների հետ և առաջարկեց Թիֆլիսում ևս կազմել դրա մի ճիւղը, մի բիւրօ, որը կապ պահպանելով միւս տեղերի հետ՝ սկսի նոյն ուղղութեամբ գործել։ Կարդացուեց կուսակցութեան ծրագիրը։ Մի շարք համակրական ճառերից յետոյ սկսեցին հետզհետէ քննադատութիւններ առաջ գալ, որոնք վերջում հասան շատ որոշ արտայայտութիւնների, ամբողջապէս դիմադրական ոգով [1])։

Ծրագրի մէջ որոշակի նկատւում էր յեղափոխական ոգու և ճնշուած ազգերի ազատ զարգացման երաշխաւորութեան բացակայութիւնը։ Եւ քննադատութիւններն էլ դրանց շուրջն էին պտտում։ Խօսեցին գլխաւորապէս վրաց երկու կուսակցութիւնների ներկայացուցիչներ՝ Սոցիալ-դէմօկրատների և Ինքնավարականների, ապա մի քանի հոգի էլ Հ. Յ. Դաշնակցութեան անունից։ Սոցիալ-դէմօկրատները կանգնած իրենց այն տեսակէտի վրայ, որ ամէն մի ինքնավարական պահանջ բուրժուական է և բաժանում է պրոլետարիատին ու նրա զանազան մասերի սերտ միութիւնը դժուարացնում, դիմադրում էին մի կողմից „Օսվօբօժդենիէ“-ի ծրագրին, իսկ միւս կողմից՝ իրենց ինտելիգենցիայի մի մասի ինքնավարական ձգտումներին։ Վերջինների դէմ առանձնապէս բերում էին պատճառաբանութիւններ այն մտքով, որ վրացի ինքնավարականները իրենց քարտէզի մէջ գցել են օրինակ և Թիֆլիսը, որը պատմական իրաւունքով վրացիներինն է, իսկ իրապէս բնակուած է մեծ մասամբ հայերով, որոնք և ինքնավար Վրաստանում մի իրաւազուրկ ժողովուրդ պիտի դառնան։ Որ իբր թէ հայերի համար դա ոչ-ցանկալի պահանջ կը լինի, քանի որ հայերը միապաղաղ ազգաբնակութիւն չլինելով և որոշ տէրրիտօրիա չունենալով, չեն կարող նոյնպէս ինքնավարութեան հարց դնել։ „Ինքնավարականները“ պնդում էին, որ վրացիների և հայերի հաշիւները զուտ ներքին, ընտանեկան են և որ երկու ժողովուրդները իրար հետ կարող են կարգադրել այդ հաշիւները, իսկ ընդհանուր թշնամու դէմ կարող են միանալ։

Դաշնակցական երեք ճառախօսներ, մինը միւսին լրացնելով, պարզեցին, որ „Օսվօբօժդենիէ“-ի ծրագիրը, թէև արտայայտում է ռուս ինտելիգենցիայի բարի ցանկութիւնները մանր ազգութիւնների վերաբերմամբ, բայց այդ ցանկութիւնները միայն թղթի վրայ են և իրականութեան մէջ ոչ մի ապահովութիւն չեն ներկայացնում։ Ամենաազատ սահմանադրութիւն ունեցող երկրներում անգամ, փոքրիկ, հպատակ ժողովուրդները ազատ

---

1) Ժողովի սկզբում տեղի ունեցաւ մի միջադէպ։ Նիստը դռնփակ էր եւ կողմնակի մարդիկ հնարաւորութիւն չունէին ներկայ լինելու, թէկուզ միայն ունկնդրութեան համար։ Բայց ահա հազիւ էր նախագահը իր բացման ճառը վերջացրել, երբ նախասենեակում լսեցին աղմուկներ եւ քիչ յետոյ հետաքրքրուողների բազմութիւնը ներս խուժեց։ Ոմանց բերանից լսւում էր բացականչութիւն. „Մենք ենք ապրելու այդ օրէնքներով, որոնց մասին խօսւում է, մինթէ մենք իրաւունք չունի՞նք լսելու“։ Կարգադրիչները հիւրերից խոստում առան, որ նրանք իրենց հանգիստ կը պահեն, չեն խառնւի ժողովին եւ թոյլ տուին ներկայ լինելու եւ լսելու։

չեն ճնշումներից, եթէ նրանք օրէնսդրական իրաւունքով ապահովուած ու իրենց երկրի սահմաններում ազատ ու ինքնավար չեն։ Օրինակներ բերուեցին Անգլիայից, Գերմանիայից, Աւստրիայից։ Կարելի՞ է ասել, թէ „հայերը միապաղաղ ժողովուրդ չեն և տէրրիտօրիա չունին“... Դա միայն ռուսաց կառավարութեան քմահաճոյ ադմինիստրական բաժանման շնորհիւ է, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնութիւն չեն կազմում։ Եթէ չհաշկանդուենք Կովկասեան արդի նահանգային բաժանումներով, այլ դրանից անկախ նայենք քարտէզին, կը տեսնենք, որ մի խոշոր տարածութիւն Կովկասում բնակեցուած է միապաղաղ հայ ազգաբնակութեամբ, ուր նրանք 70-80 տոկոս են կազմում։ Բայց չնայելով այդ հանգամանքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը իր կողմը ունի Կովկասեան հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը՝ տէրրիտօրիական ինքնավարութեան փոխարէն պահանջում է ֆէդէրատիվ ինքնավարութիւն, որպէս զի ոչ մի փոքրամասնութիւն ճնշման չենթարկուի. ֆէդէրացիա կովկասեան ժողովուրդների մէջ՝ կանտօնային սիստէմով, ֆէդէրացիա Ռուսաստանի զանազան մասերի մէջ։ Ներկայումս վրացիները Գուրիայում և հայերը Ղարսի, Ալէքսանդրոպոլի և մասամբ Երևանի շրջանում, ուր չէզոքացրած են կառավարական բոլոր հիմնարկութիւնները՝ դատարան, ոստիկանութիւն ևն՝ համարեա թէ ինքնավար են, և այս արդէն ապացոյց է, որ ժողովուրդը հասուն է և ընդունակ ինքնիրեն կառավարելու ֆէդէրատիվ սկզբունքով։

„Օսվոբոժդենիէ“-ի ծրագրի պաշտպանը շատ ճգնեց ցոյց տալ, թէ իրենց ծրագրում նախատեսուած են հպատակ ազգերի իրաւունքները, թէ սկզբնական քայլերը ամէնքի համար միևնոյն են լինելու, ընդհանուր և գլխաւոր նպատակին՝ միապետութեան կործանման հասնելուց յետոյ, արդէն ժողովուրդներին իրենց է մնում անուհետև կարգադրել իրենց վիճակը և ծրագրի մէջ նոր յաւելումներ կամ փոփոխութիւններ անել. — բայց համոզել անկարող եղաւ։

Վիճաբանութիւնը աւարտելուց յետոյ, դուրս եկան բոլոր այն տարրերը, որոնք չցանկացան միանալ այդ կազմակերպութեան, մնացին մի խումբ բուրժուա-ինտելիգենտներ, որոնք և կազմեցին բ ի ւ ր օ։

Այսպիսով մի առիթ ևս ներկայացաւ ցոյց տալու, որ ճնշուած ազգերը և մասնաւորապէս Կովկասը իրենց անյետաձգելի և ուրոյն պայմաններն ու պահանջներն ունին, որ տեղական ինքնավարութիւնը ներքին օրէնսդրական իրաւունքով, տնտեսական և կուլտուրական ազատ զարգացման պայմաններով,— մի անյետաձգելի պահանջ է, որ Կովկասի ժողովուրդը այդ բանը լաւ գիտէ և մտադիր չէ դարձեալ միամիտ գտնուել և տուժել։ Եւ „Օսվոբոժդենիէ“-ի յարգելի ներկայացուցիչը հեռացաւ Թիֆլիսից լաւ գիտակցելով այդ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՒԱՅԻՆ ՊՕՏԵՐԱԶՄԸ

Վերջացա՞...։ Բալտեան նաւատորմն էլ ջնջուեց եապոնացիների ձեռքով և Ռուսաստանի նաւային ուժը ընդմիշտ խորտակուեց Դայրագոյն Արևելքում։

Բոլոր ռուսական նաւերը, բացի մէկից, ոչնչացան կամ թշնամու ձեռքն ընկան և երեք հրամանատար ծովապետները — Բօժդեստվենսկի, Ֆոլկերգամ ու Նեբոգատով — երեք հազար մարդկանցով գերի բռնուեցին — այս է վերջին ծովային ճակատամարտի հետևանքը։

Այդ սոսկալի արկածի պատճառները նոյնն են, ինչ որ դիտուել են բոլոր նախորդ արկածներում, — ցարի զօրքը անդամալոյծ է՝ ծովի թէ ցամաքի վրայ, նաւերը վատ են, ծովապետները վատ են, ամբողջ ռազմական արուեստը վատ է, ստոր է ժամանակակից ռազմագիտութեան պահանջներից, վերջապէս՝ չկայ ոգևորութիւն ռուս զինուորների մէջ, չկայ ռազմի անհրաժեշտ կրակը, որ այնպէս վառում է եապօնացիներին...

Բալտեան նաւատորմն էլ ջարդուած... Մի անպատիւ պարտութիւն ևս այնքան ծանր ու նուաստացուցիչ պարտութիւններից յետոյ։ Նէմէզիդան է, որ խրոխտ ու սպառնական կանգնած ցարի գլխին, իր դատավճիռն է արտասանում փտած ու անարգ բռնապետութեան դէմ, մահուան անողոք դատավճիռը։ Էլ դարձ չկայ։ Էլ վերջացան յաղթութեան շանսերը. այժմ մնում է ռուս ինքնահաւան բռնապետութեանը՝ կամ անպատիւ խաղաղութիւն կնքել իր ոչնչութիւնը խոստովանելով, կամ թէ շարունակել մարդկային արիւնոտ սպանդանոցները՝ առանց յուսոյ ոևէ նշոյլի, ի փառս երկգլխեան „հզօր“ արծուի... Երկու դէպքումն էլ բռնակալութիւնը իր գերեզմանն է փորում։

Նոր պարտութիւնը նոր թափ է հաղորդում յեղափոխական շարժման և արդէն աճում է ներքին ագիտացիան։ Երկչոտ օրինական մամուլն անգամ կատաղութեամբ մտրակում է բիւրօկրատական սիստէմի անընդունակութիւնը և պահանջում է ազգային ժողովի անմիջական գումարում։ „Նովոյէ Վրէմիա“-ի պէս օրգաններն իսկ արձագանք են տալիս ազատամիտ կոչերին։ Զզւանքն ու զայրոյթը աճում, տարածւում է և այլևս դժուար է վարձկան Բուլիգիններով համար՝ քաշքշուկներով լռեցնել ժողովուրդների ապստամբող ձայնը, կանխել Յեղափոխութեան մօտեցող յորձանքը...

* * *

Լարուած, տենդային դրութիւնը յարատևում է։ Դայրագոյն Արևելքի հրդեհը չէ միայն, որ մտածել է տալիս ժողովուրդներին, այլև նորանոր հրդեհների վտանգը։ Դիւանագիտութիւնը, մարդկութեան այդ զզուելի պատուհասը, միշտ գործի վրայ է։ Բազմատենչ ու փառատենչ վեհապետներ ու մինիստրներ՝ պատրաստ են ընչին պատրուակներով հսկայական ընդհարումներ առաջացնել պատրաստ են ցինիկ թեթևամտութեամբ խաղալ ազգերի ճակատագրի հետ։ Ի՞նչ է մի Վիլհելմի, մի Բիւլովի, մի Դելկասսէի համար տասնեակ հազարաւոր մարդկանց արիւնը... Միայն թէ անուն հանեն, յաւերժական պատմութեան էջերում, գոռ յաղթանակի դափնիներ վաստակեն։ Հերոստրատեան փառք...

Բարեբախտաբար, խաղաղ, անվտանգ ընթացք առաւ Մարոկկոյի հարցը։ Մի վայրկեան նա փոթորիկ հանեց։ Մի վայրկեան ստեղծուեց ռազմական մթնոլորտ Արևմտեան Եւրոպայում, որ յիշեցնում էր 1870-ի ահաւոր օրերը։ Մեծամտութեան ախտով բռնուած ֆրանսիական պետական գործերի մինիստրը՝ ուզում է անպատճառ մեծ գործեր տեսնել. տարիներից ի վեր նա

միշտ աւելի ու աւելի ամրապնդելով Ֆրանսիայի կապը Ռուսաստանի, Անգլիայի ու Իտալիայի հետ՝ միևնոյն ժամանակ գրգռիչ ընթացք էր բռնել Գերմանիայի նկատմամբ։ Մարօկկոյի խնդրում այդ գրգռումները հասան իրենց գագաթնակէտին։ Մինիստր Դելկասսէ մշակում է արշաւանքի մի մեծ ծրագիր, կամ՝ պաշտօնական լեզուով՝ „խաղաղ թափանցման“ մի նախագիծ՝ Մարօկկոյում, — և այդ անում է առանց բանակցելու Գերմանական կառավարութեան հետ, որը նոյնպէս ունի իր տնտեսական շահերն ու ծրագիրները Աֆրիկայի այդ անկիւնում։

Գերմանիան տեսաւ այդ ընթացքի մէջ մի տեսակ արհամարհանք իր վերաբերութեամբ։ Աւանդական հակառակորդութիւնը ուժգին բռնկուեց։ Գերմանական մամուլը կծու, թունաւոր լեզուով սկսեց յարձակումներ։ Եւ իբրև „ազգային“ ցասումի թարգման՝ յաւիտենական կօմմի-վոյաժեօր Վիլհելմ II մեծ դղրդոցով ճանապարհ ընկաւ դէպի Մարօկկո՝ շեշտելու համար սուլթանի առջև գերմանական հայրքն ու ազդեցութիւնը՝ ֆրանսիականի դիմաց։

Դող անցաւ Ֆրանսիայի և ամբողջ առաջադէմ մարդկութեան ջղերով։ Մի երկրորդ պատերազմ՝ կը լինէր աղէտաբեր, մի կատաստրոֆ ընդհանուր քաղաքակրթութեան դատի համար։ Ուստի և երկուստեք իրենց ամբողջ ուժով խօսեցին արմատական, խաղաղասէր մտքերը. սօցիալիստական մամուլը երկու երկրներում սկսեց Ֆրանսիայի և Գերմանիայի միջև սանձահարել ռազմի հակումները։ Դելկասսէի դէմ այնպիսի թափով յարձակումներ տեղացին ֆրանսիական սօցիալիստների կողմից, որ մինիստրը հարկ համարեց ներկայացնել իր հրաժարականը, որը, սակայն, յետ վերցուեց կարճ ժամանակից յետոյ։ Դէլկասսէ խելքի եկաւ, զգաց ահաւոր պատասխանատուութիւնը, յայտնեց, որ պատրաստ է պաշտօնական բանակցութեան դիմել Բերլինի հետ. — Նրան հասկացրին հայրենիքի շատ փափուկ վիճակը, Ռուսաստանի սնանկութիւնը և „դաշնակցութեան“ անյուսալիութիւնը և այլն, և այլն, մի շարք ծանրակշիռ նկատումներ, որոնք թելադրում են գաղիական աքլորին՝ փոքր ինչ չափաւորել իր յաւակնութիւնները...

Մարօկկոյի խնդիրը, այնուամենայնիւ, դեռ ունի կնճիռներ և գուցէ նոր ու աւելի դառն անակնկալներ նետէ հրապարակ։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿԱԼԻԱԵՎ

Կախաղանները ազատութեան հրդեհի վառելիքն են — ասել է մի ռազմիկ-մտածող։ Որքա՜ն ուրեմն պաշտելի են այն երիտասարդները, որոնք ազատութեան տագնապի միջոցին՝ հերոսական վճռականութեամբ նետւում են ժողովրդի ամենադաժան ոսոխների դէմ, որպէս զի յետոյ նոյնպիսի հերոսութեամբ գնան դէպի կախաղան...

Նրանց թիւը ստւարանում է օրըստօրէ. երկարատև թմրութիւնից յետոյ անձնուրացութեան վեհ զգացումը արթնանում է ռուսական կայսրութեան բոլոր ծայրերում. տանջւած, հալածական ժողովուրդների արգանդից ծընւում են շարունակ խիզախ հոգիներ, որոնք ահաւոր, ցնցող գործողութիւններով թարգման են լինում դարերով ամբարւած վրէժի ու ցասումի։ Նրանք իրենց յատուկ տեղն ունին ազատագրական մարտի կրկէսում, Նրանց գործերը գալիս են լրացնելու մասսային զինւած ու անզէն շարժումները, գալիս են խրախուսելու, ամրապնդելու ժողովրդական միահամուռ ճիգը։

Այդ հերոսական դէմքերից մէկն է նորերս Մոսկւայում կախաղան հանւած՝ սօցիալիստ յեղափոխական կուսակցութեան զինւոր՝ Կալիաեվ, որ ներկայ տարւայ փետրուարի 4-ին Մոսկւայում ռումբի հարւածով կտոր-կտոր արեց մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչին։ Մէկն էլ աւելացաւ Բալմաշեօվների ու Սազոնովների փայլուն պլէադին, որ աշխարհի հիացմունքն է շարժում, որ պատիւ է բերում ռուս ժողովրդին և սօցիալիստ յեղափոխական կուսակցութեանը։ Մեն չենք բնորոշի այդ սքանչելի դէմքը, այլ միայն կը բերենք մի քանի կտորներ նրա մի նամակից ու դատաւորների առջև արտասանած ճառից։ Դրանք լաւագոյն վկայութիւններ են հերոսի անձի ու գործի վսեմութեան։

Ահա „Ընկերներին“ ուղղած նրա նամակը, որ հրատարակւած է „Բէվոլիւցիօննայա Ռօսսիա“ի մէջ.

Իմ սիրելի բարեկամներ եւ անմոռանալի ընկերներ,

Դուք գիտէք, ես արի, ինչ որ կարող էի անել՝ փետրուարի 4-ին յաղթանակը ձեռք բերելու համար։ Եւ ես իմ՝ անհատական զգացումների սահմաններում — երջանիկ եմ, գիտակցելով, որ կատարեցի այն պարտքը, որ ծանրացած էր ամբողջ արիւնոտուող Ռուսաստանի վրայ։

Դուք գիտէք իմ համոզմունքներն ու իմ զգացումների ուժը և թող ոչ ոք չ'ողբայ իմ մահը։ Ես ինձ ամբողջապէս նուիրեցի աշխատաւոր ժողովրդի ազատագրական կռուին. իմ կողմից որևէ զիջումի մասին խօսք չէ կարող լինել բռնապետութեան առաջ, և եթէ կեանքիս բոլոր ձգտումների եզրակացութեան մէջ ես արժանի գտնւեցի բռնութեան դէմ ուղղւած համամարդկային բողոքի բարձրութեան,— թող ուրեմն իմ մահը ևս պակէ իմ գործը գաղափարի մաքրութեամբ։

Մեռնել համոզմունքների համար, կը նշանակէ հրաւիրել դէպի կռիւ և որքան էլ մեծ զոհեր պատճառէ բռնապետութեան հաշւեյարդարումը, ես միանգամայն հաւատացած եմ, որ մեր սերունդը ընդմիշտ վերջ կը տայ նրան... Դա կը լինի սօցիալիզմի մեծ հանդէսը, երբ նոր կեանքի ասպարէզը կը բացւի ռուս ժողովրդի, ինչպէս և այն բոլոր ժողովուրդների համար, որոնք կրում են ցարի բռնութեան նոյն դարաւոր լուծը։

Բոլոր սրտով ձեզ հետ եմ, իմ սիրելի, անմոռանալի ընկերներ։ Դուք իմ նեցուկն էիք ծանր վայրկեաններում, ձեզ հետ ես միշտ բաժանում էի թէ ձեր և թէ մեր բոլոր ուրախութիւններն ու տարակուսանքները, և եթէ երբ և իցէ կը յիշէք ինձ ընդհանուր ժողովրդական բերկրութեան գագաթին՝ թող իմ ամբողջ յեղափոխական աշխատանքը լինի ձեզ արձայայտութիւն այն խանդավառ սիրոյ, որ ես տածում եմ դէպի ժողովուրդը և այն ինքնանվստահ յարգանքի, որ ունեմ ձեզ համար։ Ընդունեցէք այն՝ որպէս տուրք իմ անկեղծ մտերմութեան դէպի կուսակցութիւնը, դէպի այն կուսակցութիւնը, որ կրող է հանդիսանում „Նարօդնայա Վօլիայի“ պատւիրաների բոլոր իրենց ընդարձակութեամբ։ Կուզէի վերջին անգամ յիշել անունները այն բոլոր անձերի, որոնք անսահման սիրելի են, մօտ են իմ սրտին, բայց թող իմ վերջին տնքոցը լինի նրանց համար իմ մեռաս բարևը և իմ խրոխտ կոչը դէպի ազատութեան կռիւ։

Գրկում ու համբուրում եմ ձեզ բոլորիդ

Ձեր Դ. ԿԱԼԻԱԵՎ

Նոյն խրոխտ տոնը, նոյն անխռով ու հպարտ ինքնագիտակցութիւնն է ցոլում դատաւորներին ուղղած՝ երի-

տասարդ հերոսի յուզիչ ճառի մէջ, որը մի ցնցող ամբաստանագիր է բռնապետական Ռուսաստանի դէմ.

„Ես ձեր մեղադրեալը չեմ, այլ ձեր գերին։ Մենք երկու պատերազմող կողմեր ենք. դուք—ներկայացուցիչ էք արքայական կառավարութեան, վարձկան ծառաներ կապիտալի և ցարի։ Ես—մէկն եմ ժողովրդական վրիժառուներից, սոցիալիստ եմ և յեղափոխական։ Մեզ բաժանում են դիակների լեռներ, հարիւր-հազարաւոր խորտակուած մարդկային գոյութիւններ, արեան և արտասուքի ամբողջ ծով, որ տարածուել է բովանդակ երկրում սարսափի ու ցասումի հեղեղներով։—Ինձ գերի առնելով՝ դուք կարող էք այժմ ենթարկել ինձ դանդաղ նահատակութեան տանջանքներին, կարող էք սպանել ինձ, բայց իմ անձի վրայ դուք դատաստան չունիք... Ես ձեզ չեմ ճանաչում, ոչ էլ ձեր օրէնքը“...

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

I

Ռումբը խօսեց։

Գաղտագուած հայ ժողովրդի վրէժի սրատաձայն խօսքն էր այն։

Հրէշը, որ քամեց մեր արտի արիւնը, ողբմելի դիակ է հիմա։

Փետրուարի 6-9-ին նահատակուած մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ։

Ռումբը դատեր շատ ունի դեռ և վայ նրանց, որոնք կը կամենան այսուհետև յոշտել հայ ժողովուրդը։

Կորչի՛ բռնակալութիւնը,

Կեցցէ՛ Կովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը,

Կեցցէ՛ ազատ դաշնակցական կառավարութիւն։

11 Մայիսի, 1905

II

Քաղաքացի՛ներ,

Շաբաթշաբթի, մայիսի 11-ին, յերեկոյ ժամը 3-ին, քաղաքի կենտրոնում, Պարապետի վրայ, Բագուի նահանգապետ Իշխան Նակաշիձէն մահուան պատժի ենթարկուեց։

Հ. Յ. Դաշնակցութիւնը նրան դատապարտել էր մահուան իբրև փետրուարի 6-9-ի արիւնոտ օրերի գաղտնի կազմակերպիչ և հեղինակը։ Այս վճիռը իր ժամանակին հաղորդուած էր դատապարտածին։ Նոյն վճիռը արձակուած էր նաև Բագուում գործող միւս յեղափոխական կազմակերպութիւնների կողմից՝ առանց ազգութեան և կուսակցական խարսխթեան։ Վճիռը ի կատար ածուեց Դաշնակցութեան կողմից, որ այս պարագայում առաւելագոյն իրաւատէրն է հասարակական վրէժխնդրութեան։

Իշխան Նակաշիձէի կրած պատիժը թող չշփոթեցնէ ոչ ոքին։ Դա մի արդար հատուցումն է մի զազիր ոճրի—կանգնեցնել հարևանը հարևանի դէմ և կազմակերպել մասսային կոտորած՝ խաղաղ ժողովուրդը ահաբեկելու նպատակով։ Իշխան Նակաշիձէն մարդասպան էր և դաւաճան։ Նա մատնեց իր պահպանութեան յանձնուած քաղաքը հրոսակների և աւարառուների և դրեց մարդասպանների ձեռքը մահացու զէնքեր, և այդ զէնքերը թաթախեց հարիւրաւոր անմեղների արիւնով։ Մահապարտ Նակաշիձէն պարտաւոր էր կնքել իր եղեռնալի կեանքը անարգ մահով։ Այդ էր պահանջում հասարակական վրդովուած խիղճը և Հ. Յ. Դաշնակցութիւնը դրա արտայայտիչը հանդիսացաւ։

Հրաւիրում ենք ձեզ, քաղաքացիներ, խաղաղութեան և անդորրութեան։ Մի՛ կորցնէք ձեր սառնասրտութիւնը։ Իշխան Նակաշիձէն պատժուեց իբրև եղեռնագործ, որի ճակատին արդէն դրոշմած էր հասարակայ անարգանքը և որ դատապարտուած էր հասարակական դատաստանով։

Պարապետի վրայ պայթած ռումբը թո՛ղ չներշնչի ձեզ երկիւղ վաղայ համար։ Այդ ռումբը ուղղուած է մի սրիկայի դէմ՝ որ սերմանում էր ազգաբնակութեան մէջ սաստկութիւն և երկպառակութիւն, որ ձեր և մեր թշնամին էր, որ կոտրեց ձեր սրգիկերանց, հայրերին, մայրերին, եղբայրներին և քոյրերին։

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԲԱԳՒԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

12 մայիսի, 1905

ՆԻՒԹԱՏՈՒՍԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Ռուսաստան.—„Դրամ“ կոմիտէէն 26,500 ֆրանք։

Գերմանիա.—Միւնխէնէն Լ. Խ., ի նպաստ Սասունի, 5 ֆրանք։

Ռումանիա.—Փոքշանի „Ատղիկ“ խմբէն 65 ֆրանք. նուիրատուներն են՝ Սուք, Անտօն, Ռումբ, Թափառական, Վահրամ, Զամբիկ, Գողիաթ, Գոռայր, Երկաթ, Զօրք, Հայդուկ, Կայծակ, Զոհ, Հուր, Սմբատ, Սուիւ, Ճամբորդ մը, Թուր 3-ական ֆր., Դաշոյն, Թորգոմ, Գառն 1-ական ֆրանք։

Ցունաստան.—Զանթայէն ի նպաստ Սամսոյ կարօտելոց 13 ֆրանք. նուիրատուներն են՝ Գ. Մ., Խ. Մ., Ա. Մ., Ա. Տ. 2-ական ֆր., Ն. Ս. 2. 50, Ս. Մ. 2. 50 ֆրանք։

Ընդհանուր գումար 26,583 ֆրանք։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ *կեդր. կոմիտէն՝*

1904 թ. յունիսի 1-էն մինչեւ դեկտեմբեր 1.—

Հովիտ ենթակոմիտէն՝ Ուխտագնաց գիւղ 50 դահեկան, Խոսրովայ գիւղ 95, Ազուանոց գիւղ 79, Պաշպալաղ գիւղ 67, Անուշաւան գիւղ 60, Կոքանոց գիւղ 53 դահեկ.։ Կայարան ենթակոմիտէն՝ Ծովափեր գիւղ 396 դահեկան, Նեղուց գիւղ 45, Բարւոք 125, Կենտրոնակէտ գիւղ 45, Ոսկէհանք 30, Կաքին 55, Առուակ 15, Քաջարի 32. 20, Տոնմիկ 20, Պալար 926։ Տեղային խմբերից՝ Արծրունի 20 դահ., Մենակներ 60, Ազատ II 60, Ցոյս 40, Նոր խումբ 25։ Շրջակայ գիւղերից՝ Կայարան շրջանէն 2052 դահեկան, Սֆինքս գիւղի Ծաղիկ խմբ. 40, Բաքեւոն գիւղ 63, Սալտնիկ գիւղ 70, Մանիսա գիւղ 73. 20, Կայարան շրջանից եւս 108, Սֆինքսի Անդրանիկ 100 դահեկան։ Գումար 4795 դահեկան։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ *կեդր. կոմիտէն՝*

Վրէժից 1904 թ.—Ծիածան խմբ. վիճակախաղ. ներկայացում. բուֆէտ. 1682. 95 դրամ, Աւարայր խմբ. 200, Աւետիսեան խմբ. 208. 70, Աշակերտական միութիւն 500, Անդրանիկ խմբ. 241. 25, Ափից 130, Արիս խմբ. 666. 80, Կայծակ խմբ. 175, Ճաշկերոյթից 37, Ախուէր խմբ. 1346, եւս նուէր 615. 40, նոյն խմբ. մի պարահանդէսից 869. 70 դրամ։ Գումար 6672 դրամ 80 կոպէկ։

№ 35-ով հանդամանակած.—

Թէհրանում՝ Ոմն 500 դրամ, Մահտեսի 500, Թէհրան 500, Խանան 500, Ոմն 500, Զըբըլթորոս 350, Ոմն 350, Մելիք 400, Մարո 350, Երկունք, Արշալոյս, Խորշիդ, Արեւմուտ, Զիքդ, Վշտացեալ, Մուտք, Գլատ, Ոմն 250-ական, Սրցունք 350, Փրէկ, Շամս, Աղպէր մարդ, Գոգոն, Փիլիպպ., Արեւելք, Պանկոր, Ոմն, Ոմն, Ոմն, Ոմն, Մուրատ 200-ական, Ոմն 150, Ն. Խ. Ա., Ոմն, Ոմն, Քուրակա 100-ական։ Գումար 9500 դրամ։

(Կը շարունակուի)

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) **ԴԷՊԻ ԿՈՒԻ** . . . . . գինը 2 ֆ.

2) **ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ** } Վ. Դօլօշեան, Յ. Ագրիպասեան „ 20 ս.

3) **ՊՕՏՎԻԳԻ ՅԱՐԻՋԱՄ** . . . . . „ 50 ս.
(Բագուի դէպքերի մասին, ռուսերէն լեզուով)

4) *LES TUERIES DE BACOU* . . „ 20 ֆ.

Դիմել »Դրօշակ»ի խմբագրութեան

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „DROSCHAK“, Genève (Suisse)